

## ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Հինաստանի գիտությունների ակադեմիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր

Սույն թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Հինաստանի գիտությունների ակադեմիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր:

Հուշագրի նպատակն է ամրապնդել և զարգացնել երկու երկրների համագործակցությունը գիտության մասնավորապես ֆիզիկայի և աստղաֆիզիկայի, էկոլոգիայի, քիմիայի և կենսաբանության, երկրաբանության ոլորտներում: Ըստ հուշագրի՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Հինաստանի գիտությունների ակադեմիան կզարգացնեն համագործակցությունը համատեղ հետազոտական նախագծերի իրականացման, գիտաշխատողների փոխանակման, գիտական հանդիպումների մասնակցելու և համատեղ գիտաժողովներ ու սեմինարներ անցկացնելու, տեղեկատվության և գիտական հրապարակումների փոխանակման միջոցով:

«Մեզ համար մեծ պատիվ է համագործակցության հուշագիր ստորագրել Հինաստանի գիտությունների ակադեմիայի հետ: Այս համագործակցության շրջանակներում մենք պետք է հատուկ ուշադրություն դարձնենք երիտասարդ մասնագետների պատրաստմանը: Մենք ուրախ կլինենք ընդունել չինական կողմի հետազոտողներին մեզ մոտ և անելու ենք հնարավորին առաջ գնալու համար: Մենք ունենք ուժեղ ինստիտուտներ և ներուժ, մեզ մնում է ակտիվ համագործակցել: Հույս ունեն, որ կխորացնենք մեր համագործակցությունը գիտության տարբեր բնագավառներում»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանը և առաջարկեց չինացի գործընկերներին, բացի հուշագրի ստորագրու-



մից, համագործակցության պայմանագրեր ստորագրել ՀՀ ԳԱԱ առանձին ինստիտուտների և Հինաստանի գիտությունների ակադեմիայի ինստիտուտների միջև:

«Հինաստանի գիտությունների ակադեմիան ստեղծել և կառավարում է Հինաստանի գիտական ենթակառուցվածքների մեծ մասը: Այդ խոշոր գիտական ենթակառուցվածքները բաց են օտարերկրյա գիտնականների համար: Ես կարծում եմ, որ դա լավ հարթակ է մեր հետագա համագործակցության համար»,- ասաց Հինաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահ Զժան Յապինը:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարոտուղար Ռուբեն Դարբինյանը բարձր գնա-

հատեց «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնությունը: Նա նշեց, որ Հինաստանի գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ ստեղծված Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ANSO) հայտարարած մրցույթում Հայաստանը շահել է դրամաշնորհ, որը վերաբերում է խաղողի գենետիկային: «Մենք շատ շնորհակալ ենք ANSO-ին և կշարունակենք կապ պահել»,- ասաց նա:

Հինաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահը նշեց, որ ANSO-ի շրջանակներում ամեն տարի ֆինանսավորվում են 300 մագիստրանտ և 200 ասպիրանտ: «Քանի որ Հայաստանը ANSO-ի համահիմնադիր է, հույս ունեն, որ ավելի շատ հայ գիտնականներ, մագիստրանտներ և ասպիրանտներ կկարողանան օգտվել մեր ծրագրերից և գալ Հինաստան կրթվելու»,- ասաց Հինաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահը:

Զժան Յապինը շնորհավորեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանին և ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին ՀՀ ԳԱԱ-ի 80-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ մաղթելով հաջողություն և բարգավաճում:

Հինաստանի գիտությունների ակադեմիան հիմնադրվել է 1949թ.: Այն առաջատար խորհրդատվական կենտրոն է Հինաստանի կառավարության համար և համալիր կենտրոն բնական գիտությունների բոլոր ոլորտներին և բարձր տեխնոլոգիաների հետազոտությունների համար: Ակադեմիան ունի 6 բաժանմունք, 106 ինստիտուտ և բարձրագույն կրթական 3 հաստատություն, 60 հազար գիտաշխատող և կառավարող մարմնի ներկայացուցիչ, ավելի քան 800 ակադեմիկոս, 126 արտասահմանյան անդամ աշխարհի ավելի քան 20 երկրներից:



Ս.թ. սեպտեմբերի 12-14-ը ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան - 120» խորագրով միջազգային գիտաժողովը, որի նպատակն էր ներկայացնել խաչատրյանագիտության արդի վիճակը, քննության առնել հայ ականավոր կոմպոզիտորի ստեղծագործական, կատարողական, երաժշտական, հասարակական գործունեությունը, արժևորել նրա թողած ժառանգությունը, բացահայտել նրա ստեղծագործության դերը հայ և համաշխարհային երաժշտության մեջ, նախանշել զարգացման ուղիները:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: «2023 թ. նախարարության իրականացրած մշակութային միջոցառումների շարքում հատկապես կարևոր տեղ է զբաղեցնում Արամ Խաչատրյանի երաժշտության հանրահռչակումը: Անցած ամիսների ընթացքում հայ

## ՀՀ ԳԱԱ-ում միջազգային գիտաժողովով նշանավորվեց ականավոր հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյա հոբելյանը

երաժիշտները հյուրախաղերով հանդես են եկել աշխարհի տարբեր երկրներում՝ ներկայացնելով կոմպոզիտորի սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նախատեսվում են օպերային թատրոնի հյուրախաղերը Ֆրանսիայում և Վրաստանում, որի ընթացքում Փարիզում և Թբիլիսիում կներկայացվեն Խաչատրյանի բալետները»,- ասաց Դանիել Դանիելյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանն իր ողջույնի խոսքում նշեց. «Աշխարհահռչակ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, արվեստագիտության դոկտոր Արամ Խաչատրյանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա պատմության ընթացքում միակ երաժիշտ ակադեմիկոսն է: Նա ակադեմիկոս է ընտրվել 60 տարի առաջ ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանի առաջարկությամբ:

Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության հարցերին նվիրված ակադեմիական առաջին գիտական մատչելի գույքը մարվել է այս դափնի՝ 1974 թ. հոկտեմբերի 22-ին, որին մասնակցել է Արամ Խաչատրյանը: Այսօր կրկին այս նույն դափնի՝ հավաքվել են արդի միջազգային արվեստագիտության, մասնավորապես երաժշտագիտության վաստակաշատ ներկայացուցիչներ և երիտասարդ հետազոտողներ աշխարհի 8 երկրներից: Սա վկայում է այն մասին, որ անցած տասնամյակների ընթացքում աշխարհում ոչ միայն չի նվազել հետաքրքրությունը Արամ Խաչատրյանի հանձնարել ե-

րաժշտության հանդեպ, այլև նրա ստեղծագործական գործունեությունը շարունակում է մնալ հայ և օտարազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը:

«Արամ Խաչատրյանը մեծ հետք է թողել համաշխարհային երաժշտության պատմության մեջ՝ նոր մակարդակի վրա բարձրացնելով Արևմուտքի և Արևելքի երաժշտության սիմբոլը: Արամ Խաչատրյանը դարձել է Հայաստանի երաժշտական այցեքարտը: Նրա երաժշտությունն աչքի է ընկնում լավատեսությամբ և հումանիստական ուղղվածությամբ:

Ես վստահ եմ, որ մեր գիտաժողովի արդյունքները շատ կարևոր հանգրվան կդառնան միջազգային խաչատրյանագիտության ասպարեզում, առհասարակ երաժշտագիտության մեջ»,- ասաց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը:

Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը նշեց, որ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների նկատմամբ երաժշտագետների հետաքրքրությունը տարիների ընթացքում միայն մեծանում է: Արմինե Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին, ովքեր ժամանել են Երևան՝ մասնակցելու գիտաժողովին, այդ թվում՝ Արամ Խաչատրյանի թոռնուհուն՝ Օլգա Կուզինային: Նա ընթերցեց Արամ Խաչատրյանի որդու՝ Կարեն Խաչատրյանի ողջույնի խոսքը՝ ուղղված գիտաժողովի մասնակիցներին:

Հայաստանի կոմպոզիտորների

միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանը կարևորեց Արամ Խաչատրյանի ստեղծած կոմպոզիտորական դպրոցը: «Արամ Խաչատրյանը ստեղծագործական իմաստով մեծ ազդեցություն ունեցավ մեր սերնդի վրա: Այս գիտաժողովը հնարավորություն կտա նորովի մեկնաբանելու Խաչատրյանի երաժշտությունը և նրա մոտեցումները դեպի երաժշտությունը»,- ասաց Արամ Սաթյանը:

Գիտաժողովի ընթացքում ԱՄՆ-ից, Լատվիայից, Լիբանանից, Հայաստանից, Նիդեռլանդներից, Շվեդիայից, Ռուսաստանից և Ուկրաինայից ժամանած արվեստի գործիչները հանդես եկան շուրջ չորս տասնյակ գիտական զեկուցումներով՝ ներկայացնելով հայ ականավոր կոմպոզիտորի ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեությունը, ստեղծած կոմպոզիտորական դպրոցը, Արամ Խաչատրյանի դերը մշակութային դիվանագիտության զարգացման գործում, կերպարը հայ կերպարվեստում, արվեստի ազդեցիկ նշանակությունը երաժշտագիտական մտքի վրա:

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ՝ ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

# ՇԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1943-1945 թթ.)

Հայրենական մեծ պատերազմի դժվարին օրերին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը խոշոր իրադարձություն էր հանրապետության գիտական և մշակութային կյանքում, նշանակալից երևույթ հայ ժողովրդի բազմադարյան պատմության հոգևոր զարգացման ընթացքում: 1943 թ. հոկտեմբերի 29-ին Խորհրդային Միության կառավարությունը որոշում ընդունեց խՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիման վրա Հայաստանի գիտությունների ակադեմիա ստեղծելու մասին: Նոյեմբերի 10-ին Հայաստանի ժողովրդական կոմիսարների սովետն իր №702 որոշմամբ հռչակեց Հայկական խՍՀ ԳԱ կազմակերպումը՝ «Ռեսպուբլիկայի գիտահետազոտական հաստատությունների ղեկավարությունը մեկ միասնական ղեկավար կենտրոնում համախմբելու նպատակով և գիտական աշխատանքի հետագա էլ ավելի նպատակասլաց զարգացման համար, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի բազայի վրա Հայաստանի մայրաքաղաք Երևանում կազմակերպել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա»:

Նոյեմբերի 25-ին ժողկոմսովետը հաստատեց ԳԱ հիմնադիր անձնակազմը՝ բաղկացած 23 իսկական անդամից (ակադեմիկոսից), ԳԱ կանոնադրությունը և կառուցվածքը: Ակադեմիայի կազմի մեջ մտան 24 գիտահետազոտական տարբեր հիմնարկներ, ընդ որում Արմֆանի բոլոր ինստիտուտներն ու սեկտորները, ինչպես նաև առանձին ժողկոմատների, գերատեսչությունների, Երևանի պետական համալսարանի գիտական մի շարք օջախներ:

Հայաստանի ԳԱ հանդիսավոր բացումը և առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցան 1943 թ. նոյեմբերի 29-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում: Բացման խոսքում իսկական անդամներից ամենատարեցը՝ ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը, արտահայտեց բոլոր հայ գիտնականների, մտավորականության, ամբողջ հայ ժողովրդի անհուն բերկրանքը:

քը ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպման առթիվ:

Ընդհանուր ժողովը ԳԱ առաջին պրե-



զիդենտ ընտրեց ակադեմիկոս պատմաբան-արևելագետ Հովսեփ Օրբելուն, փոխպրեզիդենտներ՝ տաղանդավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանին և անվանի կենսաբան Վարդան Գուլբանյանին, նախագահության անդամ՝ ֆիզիոլոգ Սահակ Կարապետյանին: Հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ ընտրվեց Գրիգոր Ղափանցյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքի՝ Խաչատուր Կոչոյանցը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունքի՝ Իվան Եղիազարովը, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի՝ Միքայել Թումանյանը: ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Վլադիմիր Կոմարովը ընտրվեց Հայկական խՍՀ ԳԱ պատվավոր անդամ:

Հայաստանի ԳԱ հիմնադիր անդամների թվում ընդգրկվեցին նաև ակադեմիկոս գիտնականներ Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Ալիսանյան Եղբայրները, Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Բունիաթյանը, Լևոն Օրբելին, Արսեն Տերտերյանը, մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը և ուրիշներ:

Հիմնադրման առաջին իսկ ամիսներից ակադեմիայի գիտնականները հետազոտություններ ծավալեցին հիմնարար և կիրառական գիտությունների մի շարք բնագավառներում, որոնք կարևոր նշանակություն ունեին երկրի ժողովրդական տնտեսության զարգացման և պաշտպանության ամրապնդման խնդիրների լուծման գործում: Միաժամանակ սկիզբ դրվեց գիտական նոր ուղղությունների: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց հայագիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրությանը՝ շարունակելով անցյալի լավագույն ավանդույթները:

1944 թ. ԳԱ չորս բաժանմունքներն ընդգրկում էին 28 գիտահետազոտական հիմնարկներ, որտեղ աշխատում էին ԳԱ 25 իսկական անդամներ և թղթակից անդամներ, 55 դոկտորներ և պրոֆեսորներ, 131 գիտությունների թեկնածուներ, 147 ավագ և 149 կրտսեր գիտաշխատողներ, 161 գիտատեխնիկական աշխատողներ, ընդամենը՝ 668 հոգի: Եթե 1944 թ. սկզբին ԳԱ-ն ուներ 20 ասպիրանտ, ապա 1945թ. դեկտեմբերին այդ թիվը հասավ 84-ի: Դոկտորական դիսերտացիաներ էին պաշտպանել 6, իսկ թեկնածուական՝ 11 հոգի:

ԳԱ համակարգի գրադարանների գրքային ֆոնդը հարստացավ 40000-ից ավելի միավորով՝ 1946 թ. հասնելով 195000 միավորի: Լրացվեց և տպագրության պատրաստվեց Արմֆանի և ԳԱ բոլոր հրատարակությունների մատենագիտական ցանկը: Հրատարակվեցին «Տեղեկագիր հասարակական գիտությունների», «Տեղեկագիր բնական գիտությունների», «ԳԱ Ձեկույցներ» գիտական հանդեսները, ինչպես նաև 40 այլ աշխատություններ:

1945թ. շարունակվում էին աշխատանքները ակադեմիական հիմնարկների նյութատեխնիկական բազան ամրապնդելու ուղղությամբ: Սկսվեցին Բյուրականի աստղադիտարանի կառուցման աշխատանքները, ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտը Արագած լեռան վրա կազմակերպեց մշտական կայան-լաբորատորիա:

1945 թ. ընթացքում հրավիրվեց ԳԱ ընդհանուր ժողովի երեք նիստ: Հուլիսի 27-ին և օգոստոսի 2-ին տեղի ունեցավ ակադեմիայի ընդհանուր ժողովի գիտական նստաշրջանը: ԳԱ ընդհանուր ժողովը իր օգոստոսի 4-ի նիստում հաստատեց ակադեմիայի թղթակից անդամների կազմը՝ Արմեն Թախտաջյան, Ստեփան Ղամբարյան, Հարություն Մաղաքյան, Լևոն Մելիքսեթ-Բեկ, Արմենակ Նազարով, Արտաշես Շահինյան, Միքայել Չալախյան, Բորիս Պիտոտովսկի, Ալեքսեյ Ջիվելեզյան, Նուրայր Սիսակյան, Բարդուղիմեոս Ֆամարյան և այլք: Ընտրվեցին նաև ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամներ՝ սփյուռքահայ նշանավոր գիտնականներ Արամ Բոյաջյանը (ԱՄՆ) և Երվանդ Մանվելյանը (Ֆրանսիա):

Այսպիսով, Հայաստանի ԳԱ գիտականակերպական գործունեության մոտ երկու տարվա ընթացքում հիմնականում ձևավորվեցին մեր հանրապետության գի-



տական մտքի կենտրոնի ստորաբաժանումները, զգալի աշխատանքներ կատարվեցին դրանց նյութատեխնիկական բազան ամրապնդելու, գիտական համապատասխան կադրերով ապահովելու, հրատարակչական գործը ծավալելու, բնակչության շրջանում գիտալուսավորական բնույթի միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ:

**Ստեփան ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ**  
Պատմական գիտությունների  
թեկնածու

## «Մետաքսի ճանապարհի» ապդեցությունը հայ-չինական գիտական և մշակութային փոխհարաբերությունների պարզացման վրա



Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Մետաքսի և թեյի ճանապարհների դերն ու ազդեցությունը ժողովուրդների և երկրների գիտության և մշակույթի զարգացման վրա» միջազգային գիտաժողով-ցուցահանդեսը՝ նվիրված «Գոտի և ճանապարհ» չինական նախաձեռնության 10-ամյակին:

Միջոցառումը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանը, Հինաստանի ժողովրդական Հանրապետության Ֆուծիանի թանգարանը և Հայ-չինական գործընկերության կենտրոնը:

Գիտաժողովին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադյանը, Հայաստանում Հինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ֆան Յոնգը, Հինաստանի Ժո-

ղովրդական Հանրապետության Ֆուծիանի թանգարանի պատվիրակությունը, ՀՀ կառավարության ներկայացուցիչները, գիտնականներ Հայաստանից և արտերկրից:

«Գոտի և ճանապարհ» կամ «Նոր Մետաքսի ճանապարհը» Հինաստանի կառավարության կողմից 2013 թվականին ընդունված նախաձեռնություն է՝ ուղղված ենթակառուցվածքների զարգացմանը, առևտրի խթանմանը և ներդրումներին: Այն նպատակ ունի խորացնելու առևտրատնտեսական և մշակութային կապերը Հինաստանի և նախաձեռնության անդամակցած երկրների միջև, որոնց թիվը հասել է 140-ի սահմանը:

«Հայաստանը պատմականորեն «Մետաքսի ճանապարհի» կարևորագույն օղակներից է: «Մետաքսի ճանապարհի» մի հատվածը միջնադարում անցել է Հայաստանի տարածքով: Այս ճանապարհի վրա է գտնվել Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անին, որը զարգացել է նաև

հենց «Մետաքսի ճանապարհի» շնորհիվ»,- ասաց ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը:

«Մեր երկու երկրներն էլ հին քաղաքակրթությունների կենտրոններ են՝ իրենց պատմությամբ և մշակույթով: Թեև մեր երկրները հազարավոր կիլոմետրեր հեռու են, բարեկամական փոխհարաբերությունները զալիս են վաղնջական ժամանակներից: «Մետաքսի ճանապարհի» ժամանակաշրջանում մեր երկու ժողովուրդները ամուր բարեկամություն են հաստատել՝ ոչ միայն տնտեսական և առևտրային փոխհարաբերություններ, այլ նաև մշակութային»,- շեշտեց Հայաստանում Հինաստանի ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ֆան Յոնգը:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբանական թանգարանի տնօրեն Գայանե Գրիգորյանը, անդրադառնալով չինական կողմի հետ համագործակցությանը, նշեց. «Կարևորում ենք հնագույն մշակույթը կրող այս երկրի տարբեր բուհերի հետ ուսումնական ծրագրերի իրականացումը: Վստահ եմ, որ մեր համագործակցությունը կլինի շարունակական, իսկ այս գիտաժողովի արդյունքները կամրապնդեն եղած կապերը»:

ՀՀ վարչապետի օգնական Հակոբ Արահանյանը շեշտեց. «Կարևոր է, որ մեր երկու հիմնավոր գիտությունները միմյանց

ավելի լավ ճանաչեն, հաղորդակցվեն: Այստեղ կարևոր դեր ունի մշակութային և գիտակրթական համագործակցությունը: Կարծում եմ, որ մենք կարող ենք նաև գիտական լուրջ փոխգործակցություն ձևավորել չինացի մեր գործընկերների հետ»:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջային արդյունքի զարգացման խորհրդական Անահիտ Ոսկանյանը շեշտեց, որ «Մետաքսի ճանապարհը» կարևորվում է որպես միջազգային մշակութային փոխանակման ուղի, և զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագրերից մեկը «Մետաքսի ճանապարհի» կլաստերի ձևավորումն է, որն ընդգրկելու է Վայոց ձորից մինչև Գեղարքունիքի մարզ՝ Սելիմի լեռնամզեն ընդգրկող հատվածը:

Գիտաժողովի ժամանակ ստորագրվեց համագործակցության հուշագիր ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Հինաստանի ժողովրդական Հանրապետության Ֆուծիանի թանգարանի միջև:

Միջոցառման մասնակիցները երկրաբանական թանգարանում դիտեցին «Ծովային Մետաքսի ճանապարհ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային մասունքների համատեղ ցուցահանդեսը»:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ



խանները չեն ներկայացվում հանրությանը:

Այս ոլորտում որոշում կայացնողները պետք է հասկանան, թե, ի վերջո, ինչ է նշանակում ունենալ ակադեմիական քաղաք, համաշխարհային ինչպիսի փորձ կա, և, որ ամենակարևորն է, ինչ կարժենա այդ նախագիծը:

Աշխարհում հայտնի են մի շարք ակադեմիական քաղաքներ, որոնք գիտական և կրթական կարևոր կենտրոններ են տվյալ երկրի համար: Դրանք հիմնականում տնտեսապես զերգարգացած երկրներն են (ԱՄՆ, Անգլիա, Ճապոնիա, Չինաստան և այլն):

Գիտության զարգացման համար ընդհանրապես, իսկ ժամանակակից գլոբա-

լիս, որ համալսարանների տեղափոխումը հիմնականում ունեցել է երկու դրոպապատճառ՝ ուսանողների թվի աճ և ուսումնական տարածքների սղություն: Հիմա հարց կառավարությանը. արդյոք երևանում գործող համալսարանները տարածքների սղությամբ խնդիր ունե՞ն, երբ ուսանողների թիվը պակասել է ավելի քան կրկնակի, իսկ դիմորդների թիվն աստիճանաբար նվազում է: Այդ փորձը ցույց է տալիս, որ, ի լրումն վերը թվարկված առավելությունների, կան նաև մարտահրավերներ, որոնք կարող են ծառանալ համալսարանների առջև.

○ ուսանողների հավաքագրում. տեղափոխվելիս բոլոր համալսարաններն ունեցել են ուսանողների հավաքագրման հետ կապված խնդիրներ, որովհետև ուսա-

մալսարան կամ գիտահետազոտական կենտրոն: Ուղղակի նշենք, որ աշխարհի լավագույն հետազոտական համալսարանների բյուջեները հարյուրապատիկ մեծ են Հայաստանի՝ կրթությանն ու գիտությանը հատկացվող բյուջեից և համեմատական են ՀՀ տարեկան ողջ բյուջեին:

Որոշում կայացնելիս հարկավոր էր հաշվի առնել նաև տարբեր երկրների չհաշտված փորձը, օրինակ՝ Եգիպտոսի, որի կառավարությունը 2015 թ. հայտարարեց, որ կկառուցի մոր վարչական մայրաքաղաք Կահիրեից արևելք՝ ներկայիս մայրաքաղաքի ծանրաբեռնվածությունն ու գերբնակեցումը մեղմելու համար: Ակնկալվում էր, որ մոր քաղաքում, որը դեռևս կառուցման փուլում է, կտեղակայվեն նաև համալսարաններ և հետազոտական կենտրոններ: Նախատեսվում էր, որ առաջիններից մեկը կդառնա Zewail City of Science and Technology հետազոտական համալսարանը, որը հիմնադրվել է Նոբելյան մրցանակակիր Ահմեդ Չեյլի կողմից: Հետագայում նախագիծը բախվեց բազմաթիվ խոչընդոտների, և տեղափոխումն անընդհատ հետաձգվում է:

Եվ վերջում, ինչպես հիմա արդեն ընդունված է, Հայաստանում ակադեմիական քաղաք ունենալու և բուհերն ու գիտական կազմակերպություններն այնտեղ տեղափոխելու նպատակահարմարության մասին հարցի արհեստական բանականությամբ, որի պատասխանն այնպիսին էր. «Չեն կարծում, որ կա բուհերը մայրաքաղաքից դուրս տեղափոխելու իմաստ, քանի որ դա կհանգեցնի ակադեմիական և մշակութային ժառանգության զանգվածային խաթարման և վերջին հաշվով՝ կորստի»:

Սա էլ, խնդրեմ, պատասխան այն հարցերին, որ վերևում ուղեցի կառավարությանը:

Ասում ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի ղեկավար, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու

**«ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նախատեսված է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ստեղծման կամուրջային կառույցների համախմբված: Գաղափարը, կարծես, լավն է, սակայն կառավարությունն ի՞նչ քայլեր է ձեռնարկել այս ուղղությամբ և ինչպե՞ս է պատկերացում այդ ակադեմիական քաղաքը:**

Նախ, պետության կողմից ստեղծվեց «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը, որը պետք է իրականացնի այդ քաղաքի նախագծումն ու համապատասխան շենքային ենթակառուցվածքների կառուցումը, պահպանումը և բարելավումը, մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային աշխատանքների տարածքների, ինչպես նաև ստեղծարար գործունեությանը նպաստող ֆիզիկական միջավայրի ստեղծումը...

Ընդ որում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում ընդգրկված են միայն պետական բարձրաստիճան պաշտոնյաներ և ոչ մի ակադեմիկոս կամ ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ոչ մի համալսարանի ներկայացուցիչ կամ ուսանող:

Ակնհայտ է, որ կառավարությունն ակադեմիական քաղաքը պատկերացնում է մի վայր, որտեղ կան համապատասխան շենքեր ու ենթակառուցվածքներ, և որտեղ կարելի է միավորել տեղափոխել բուհերն ու գիտական կազմակերպությունները. ընդամենը մեխանիկական տեղափոխում՝ գիտնականներից ու ուսանողներից ազատելով երևանում նրանց զբաղեցրած շենքերը: Իսկ թե ինչպիսին պիտի լինի բովանդակությունը, ոչ ոքի առաջմ հետաքրքիր չէ: Այդ տեղափոխումն ինչպե՞ս կարող է ազդել կրթության որակի բարձրացման վրա, կամ այդ որակն ինչու՞ է չի կարելի ապահովել երևանում. սրանք հարցեր են, որոնց հստակ և հիմնավորված պատաս-

լացված աշխարհում առավել ևս կարևոր են միջազգայնացումն ու համաշխարհային փորձը: Այն ուսանողների համար, ովքեր արտասահմանում սովորում և բնակվում են որևէ համալսարանական կամպուսում, համաշխարհային փորձ ձեռք բերելու հնարավորություններն ավելի շատ են, քան «սովորական» համալսարանում սովորողներից: Ակադեմիական քաղաքների բնակչությունը բազմաբնույթ է, միախառնված են տարբեր մշակույթներ: Սա ուսանողներին հնարավորություն է տալիս շփվելու տարբեր մարդկանց հետ և սովորելու հուզահեռ ձեռք բերելու միջմշակութային հաղորդակցության հմտություններ: Քաղաքից դուրս գտնվող համալսարանում համաշխարհային փորձ ձեռք բերելը շատ առավելություններ ունի, մասնավորապես մշակութային իրազեկության մակարդակի բարձրացում, բարելավված հաղորդակցային խնդիրներ լուծելու հմտություններ, համաշխարհային մրցունակության բարձրացում:

Հիմա հարց կառավարությանը. արդյոք բուհերի մեխանիկական տեղափոխումից բարձրանալու է դրանց միջազգայնացման մակարդակը, արդյոք ապահովվելու է միջմշակութային միջավայր, արդյոք այստեղ են շտապելու ողջ աշխարհի առաջատար գիտնականներն ու դասախոսները, արդյոք ավելանալու է արտասահմանցի ուսանողների տեսակարար կշիռը. ո՛չ, իհարկե:

Համաշխարհային փորձը ցույց է տա-

նողների մեծամասնությունը չի ցանկանում տեղափոխվել:

○ Պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավում. ինչպես ուսանողների պարագայում, պրոֆեսորադասախոսական կազմը ևս դժկամությամբ է տեղափոխվում «քաղաքից դուրս», միշտ եղել են կորուստներ:

○ Հարմարավետության ապահովում. միշտ չէ, որ կարելի է ապահովել համապատասխան քանակի և որակի ուսումնական մասնաշենքեր, բնակարաններ, սննդի և առևտրի կենտրոններ, ժամանցի վայրեր և այլն:

Եվս մեկ հարց կառավարությանը. արդյոք մեր երկիրն ի վիճակի՞ է սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական ստեղծված իրավիճակում ֆինանսավորելու և ունենալու զոնե մեկ՝ միջազգային չափանիշներին համապատասխանող հա-

### Խմբագրության կողմից

Գիտական հանրության ճնշող մեծամասնության կարծիքով ակադեմիական քաղաքի ստեղծման ծրագիրը ժամանակավրեպ է և չի բխում մերօրյա իրողություններից (նաև մոտ ապագայի կտրվածքով):

Անհասկանալի է նաև այս հարցին ընթացք տալու կառավարության շտապողականությունը: Այն պարունակում է մեծ ռիսկեր և գիտակրթական բնագավառի համար կարող է ունենալ անկանխատեսելի հետևանքներ:

Կարծում ենք, որ պետք է հնարավորինս զերծ մնալ զարգացած երկրներին մշտապես նմանակելու գայթակղությունից և նրանց փորձը նույնությամբ պատճենելուց: Մեր առջև ծառացած մարտահրավերների շարունակական աճի պայմաններում բուհական և գիտական բնագավառների ներկայիս բնականոն գործընթացները փորձել ուղղորդել հերթական մի փորձադաշտ, մեղմ ասած, անտրամաբանական է ու անհասկանալի:

Բոլոր միջոցները բացառապես պետք է նպատակաուղղել երկրի համար օրակարգային նշանակության կարևորագույն և անհետաձգելի խնդիրների լուծմանը: Նման ծրագրերին լրջորեն անդադառնալու հերթը նույնպես կգա: Պարզապես, լրջախոտությունից ելնելով, անհրաժեշտ է հարցերն օրակարգ ներառել ժամանակին համահունչ՝ ըստ դրանց առաջնայնության:

## ՎԻՃԱԿ ՍԱՐՈՅԱՆ. ՈՒՇԱԳՐԱՎ ՊԱՀԵՐ

Սարոյանն այցելում է ինքնունչորսամյա Բեռնարդ Շոուին (1950թ.) և գտնում նրան անկողնում պառկած.

- Աղվո՞ր ես, Բեռնարդ,- ըսի:

- Գեշ եմ, Սարոյան,- ըսավ,- կը մեռնիմ:

- Դու՞ն չես մեռնիր,- դու՞ն կավարտիս քո կյանքի ճանապարհ, բայց հավերժ կապրիս քո անմահ գործերու շնորհիվ:

\*\*\*

1960-ի աշնանը, երբ Սարոյանը երկրորդ անգամ եր Հայաստանում, տեղի է ունեցել հանդիպում Գրողների միությունում, և երիտասարդ մի տիկին փորձել է նրան դիմել անգլերենով: Սարոյանը լսել է անտարբեր և ընդհատել նրան.

- Չեմ հասկնար, հայերեն ըսե, հասկնամ:

\*\*\*

Սուրբուհյանի անվան պետական ակադեմիական թատրոնում բեմադրվել էր Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը (1960թ.): Դերասանները նրան հրավիրել էին «Արարատ» ռեստորան, մեծարման ընթրիքի: Նրանց հետ է եղել նաև կուսակցության Կենտկոմի ղեկավար ընկերներից մեկը, որը բաժակաճառով դիմել է Սարոյանին.

- Շեր գրականությամբ սերունդներ են դաստիարակվել:

- Ինչո՞ւ սուտ կխոսիս, մարդ: Գրականություն ոչ մեկ մարդ դաստիարակած է:

- Այդ դեպքում ինչո՞ւ է գրողը գրում:

- Գրություն գրող ինքն իրեն կը դաստիարակե:

\*\*\*

Իր երրորդ այցելությանը՝ 1976-ին, Սարոյանը մի խումբ ուղեկիցների հետ եղել է Գառնիի աստղագիտական հետազոտությունների լաբորատորիայում, որտեղ նրան դիմա-

վորել է ակադեմիկոս Գրիգոր Գուրգադյանը: Սարոյիկ սկսել են տարբեր հարցեր տալ ակադեմիկոսին: Սարոյանն ընդհատել է իր ուղեկիցներին՝ ասելով.

-Դուք լռեք, աս մարդ խոսի, մենք մեր տգիտություն հասկնանք:

\*\*\*

Հեռուստաթերում մի գիտնական-գրականագետ փորձում է գիտական գրույցի մեջ ներքաշել Սարոյանին.

- Պարո՞ն Սարոյան, գրելու ընթացքում ի՞նչ փոխաձևումների մեջ եք տեսնում ձևի և առարկայի հարաբերությունը. ի՞նչն է նախնական ու երկրորդական, ձևը, թե՞ առարկան:

Սարոյանն զգում է հարցի անհեթեթությունը և անմիջական պատասխան է տալիս.

- Սիրելի՛..., մենք հայ ենք, մեզի ըսելիք չը պակսիր:

\*\*\*

Երևանի դպրոցներից մեկում Սարոյանը գրույց է ունենում ուսուցչուհիների հետ և առանձնապես չի ոգևորվում այն խոսքից, որ դպրոցն անգլիական թեթևմով է:


- Անգլերեն, հասկցանք, բայց հայո՞ւ դպրոց է, հայերեն լա՞վ կը սորվին: Հայն ուր ալ կերթա, կը հիմնե եկեղեցի, դպրոց և տպարան:

\*\*\*

1978-ին Սարոյանը Հալեպում հանդիպում է թատերախմբի սիրող դերասաններին, և գրուցելով հասնում են բերդի պարիսպներին:

- Այս բերդը տաանութ տարի, մինչև մ.թ.ա. 66 թիվը, պատկանել է Տիգրան Մեծին,- ասում է ուղեկիցներից մեկը:

-Հոն գրություն կա՞,- հարցնում է Սարոյանը:



-Չկա:

- Տղաք, գիշեր ատեն, մարդ չըլլա, մտե՛ք, ատ գրություն ըրե՛ք:

\*\*\*

Սարոյանը Մատենադարանի ցուցասրահում լսում է ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի բացատրությունները, և կանգ են առնում Ֆրիկի «Գանգատի» առջև:

-13-րդ դարի բանաստեղծը սոցիալական բողոքի ձայն է բարձրացնում,- ասում է Խաչիկյանը,- ճա իր խոսքը վերնագրել է «Մարդու կոշիկ յեղեալ ընդ Աստուծոյ», և ասում է՝ ինչու «Մեկին՝ հազար դեկան ոսկի, մեկին՝ ո՛չ փող մի պղնձի...»:

Սարոյանը լսում է ու հարցնում.

- Աստված ի՞նչ ըսավ:

Հենրիկ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

## Միջազգային գիտաժողովը ՀՀ ԳԱԱ-ում էր համախմբել 18 երկրների գիտնականներին

Ս.թ. սեպտեմբերի 4-8-ը ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Կոլիզիոն գոտու հրաբխականությունը և առնչվող վտանգները» խորագրով միջազգային գիտաժողովը, որի նպատակն էր համախմբել գիտնականների, ովքեր կատարում են հետազոտություններ հրաբխագիտության, հրաբխային վտանգների, պետրոլոգիայի, երկրաբանության, հրաբխային սեյսմոլոգիայի, շրջակա միջավայրի վրա հրաբխականության ազդեցության, երկրաբանական էներգիայի և հարակից այլ ոլորտներում:

Գիտաժողովին մասնակցում էին անվանի գիտնականներ ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Գերմանիայից, Թայվանից, Թուրքիայից, Իտալիայից, Իրանից, Կոլումբիայից, Կոստա Ռիկայից, Հայաստանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Նիդերլանդներից, Շոտլանդիայից, Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից, Ֆրանսիայից:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ

նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը: «Մեր ժամանակներում մենք բախվում ենք տարբեր մարտահրավերների, ինչպիսիք են Covid-19-ը և պատերազմներն աշխարհի տարբեր մասերում: Պատմությունը ցույց է տալիս, որ նման դեպքերում գիտնականները, մշակույթի և կրթության ոլորտի մերկայացուցիչները կարևոր դեր են խաղացել ժողովուրդների համախմբման գործում: Նման գիտաժողովները մեծ նշանակություն ունեն հատկապես հայ ժողովրդի համար, որը հայտնվել է ծանր աշխարհաքաղաքական իրավիճակում: Հուսով եմ, որ գիտաժողովի աշխատանքները հաջողություն կունենան և կնպաստեն միջազգային համագործակցության այս ոլորտում: Շնորհակալ եմ ձեր մասնակցության համար: Մաղթում եմ բոլորիդ արդյունավետ աշխատանք և տպավորիչ դաշտային ճամփորդություններ»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանը:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը նշեց, որ գիտաժողովի անցկացման գաղափարն առաջացել է դեռ 2010 թվականին, երբ ԱՄՆ-ի Հարավային Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Չակ Քոնորը Հայաստանում դաշտային աշխատանքների ժամանակ տեսավ Արագածի խառնարանը: «Այսօր այստեղ են բազմաթիվ անվանի և երիտասարդ գիտնականներ: Սա շատ լավ հնարավորություն է մտքեր փոխանակելու և նոր նախագծեր ու համագործակցության հարցեր քննարկելու համար: Վստահ եմ, որ մեր գիտաժողովը կնպաստի այս ոլորտում միջազգային համագործակցությանը»,- ասաց Խաչատուր Մելիքսեթյանը:

Պլենարի նստաշրջանում գիտական զեկուցումներով հանդես եկան Մեծ Բրիտանիայի Քարդիֆի համալսարանի պրոֆեսոր Ջուլիան Պիրսը, Գերմանիայի Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս

համալսարանի պրոֆեսոր Դոնալդ Դինգվոլդը, ԱՄՆ-ի Հարավային Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Չակ Քոնորը, Նոր Զելանդիայի Մեսիի համալսարանի պրոֆեսոր Կարոլի Նեմեթը, Մեծ Բրիտանիայի Լիդսի համալսարանի դոկտոր Իվան Սավոլովը, ԱՄՆ-ի Լիհայ համալսարանի պրոֆեսոր Դորե Սահակյանը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը:

Գիտաժողովը նախածեռնել էին ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը և Հրաբխագիտության ու երկրի ընդերքի քիմիայի միջազգային ասոցիացիան (IAVCEI)՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի համաֆինանսավորմամբ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Բյուրականի աստղադիտարանի նոր աշխատանքները

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողները միջազգային պրակտիկայում առաջին անգամ ստացել են դիտողական ապացույց ակտիվ աստղերի ժայթքումների և արտահոսքերում խտացումների առաջացման միջև կապի առկայության մասին:

Ակտիվ աստղերի ժայթքումների և արտահոսքերում խտացումների առաջացման միջև առկա կապը վաղուց էր ենթադրվում, սակայն առաջին անգամ միջազգային պրակտիկայում այն ստացավ դիտողական ապացույց: Այդպիսի ապացույց է PV Շեր էռուպտիվ աստղի արտահոսքում հայտնաբերված նոր խտացումը, որի կինեմատիկ տարիքը և այդ աստղի պայծառության շեշտակի աճի ժամանակահատվածը համընկնում են:



Ինչպես նշեց Բյուրականի աստղադիտարանի երիտասարդ աստղային օբյեկտներ բաժնի վարիչ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Տիգրան Մաղաքյանը, աստղերի զարգացման վաղ փուլերում դիտվող անկայուն երևույթների հետազոտությունները շատ հետաքրքրական են ոչ միայն պայծառության ժայթքումային փոփոխություններով, այլև այնպիսի զարմանահրաշ արտահայտություններով, ինչպիսիք են աստղային շիթերը:

«Մեր աշխատանքներն ընդգրկում են հետազոտություններ էլեկտրամագնիսական ալիքների լայն սանդղակում և իրականացվել են աշխարհի խոշորագույն դիտակներով, օգտագործվել են առկա բոլոր աստղագիտական շտեմարանները: Ամենարժեքավորն այն է, որ խոշորագույն դիտակներով ուսումնասիրվել են օբյեկտներ, որոնք հայտնաբերվել են Բյուրականի աստղադիտարանի 1մ Շմիդտի դասի դիտակով: Այդ դիտակով հայտնաբերվել են ոչ միայն գերծայնային արտահոսքեր երիտասարդ աստղերից, այլ նաև աստղառաջացման նոր տիրույթներ, ինչպիսիք են Mon R1 և Mon R2 աստղասփյուռները, որտեղ աստղառաջացումը շարունակվում է առ այսօր: Հայտնաբերված աստղային շիթերի մանրակրկիտ հետազոտությունները ցույց տվեցին, որ նրանցում դիտվող խտացումներն առաջանում են էպիզոդիկ արտանետումների հետևանքով, ոչ թե հետևանք են նրանցում ընթացող անկայունությունների»,- ասաց Տիգրան Մաղաքյանը: Ըստ նրա՝ աստղերի զարգացման վաղ փուլերում ընթացող անկայուն երևույթները բնական լաբորատորիաներ են էլեկտրամագնիսական, հիդրոդինամիկական ուսումնասիրությունների համար:

Ծրագրի ընթացքում Բյուրականի աստղադիտարանի գիտական խումբը համագործակցել է Ռուսաստանի

Հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի, ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի և Հավայան կղզիների համալսարանների և այլ գիտական հաստատությունների հետ:

Հետազոտությունների արդյունքները տպագրվել են «Astronomy & Astrophysics» և «Monthly Notices of the Royal Astronomical Society (MNRAS)» ամսագրերում, պարբերաբար ներկայացվել են միջազգային գիտաժողովներում և արժանացել բարձր գնահատականների:

\*\*\*

Բյուրականի աստղադիտարանում պարզել են տաք գերխիտ աստղերում հիպերոնային նյութի բաղադրությունը և վիճակի հավասարումը դեյտա-ռեզոնանսների առկայության դեպքում: Հաշվվել են աստղերի մոդելները: Հաշվվել է նեյտրոնային աստղի ներքին պատյանում նյութի էլեկտրահաղորդականության գործակիցը բարձր ջերմաստիճաններում և մագնիսական դաշտերի առկայությամբ:

«Գերխիտ կամ նեյտրոնային աստղերը տիեզերքի ամենախիտ օբյեկտներից են, որոնց ընդերքում նյութը սեղմվում է մինչև միջուկային խտությունից մի քանի անգամ ավելի մեծ խտություններ: Այդպիսի էքստրեմալ խտություններում նյութը կարող է դրսևորվել տարբեր բաղադրությունների կամ փուլերի տեսքով: Ուսումնասիրվել է նեյտրոնային աստղերի նյութի բաղադրությունը այնպիսի բարձր ջերմաստիճաններում, որոնք հասանելի են կամ կրկնակի նեյտրոնային աստղերի միաձուլման պրոցեսներում, կամ գերնոբերի պայթյուններից հետո, որոնց արդյունքում առաջանում է նեյտրոնային մախաստղ»,- պատմեց գիտական խմբի ղեկավար, Բյուրականի աստղադիտարանի «Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելատիվիստական գրավիտացիա» գիտահետազոտական բաժնի ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Արմեն Սեդրակյանը:

Հետազոտությունն իրականացվել է Ֆրանկֆուրտի առաջադեմ հետազոտությունների ինստիտուտի և Բյուրականի աստղադիտարանի համատեղ «Տրանսպորտային երևույթներ խիտ նյութում» նեյտրոնային աստղերի միաձուլումից մինչև իոնների ծանր բախումներ» ծրագրի շրջանակներում՝ Գերմանիայի «Volkswagen» հիմնադրամի աջակցությամբ, երևանի պետական համալսարանի և Լեհաստանի Վրոցլավի համալսարանի մասնակցությամբ:

\*\*\*

Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողների ջանքերով ստեղծվել է Բյուրականի աստղադիտարանի համահիմնադիր, աստղագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Բենեմին Մարգարյանի հայտնաբերած գալակտիկաների վերաբերյալ առկա տվյալների շտեմարանը:

Բյուրականի մեկնետրամոց աստղադիտակով Բենեմին Մարգարյանը ժամանակին կատարել է աստղային երկնքի առաջին սպեկտրալ շրջահայությունը: Արդյունքում հայտնաբերվել են մեծ թվով գերմանուշակագույն ավելցուկով գալակտիկաներ, որոնք ստացել են «Մարգարյանի գալակտիկաներ» անվանումը:

Շտեմարանում տեղադրված են այդ գալակտիկաների ցուցակները, նրանց բաշխումը երկնքում, գրականության ցանկը, յուրաքանչյուր օբյեկտի մասին ամբողջական տեղեկատվություն, երկնքի թվայնացված շրջահայության (DSS1/DSS2) քարտեզները, թվայնացված բյու-



րականյան առաջին շրջահայության (DFBS) տվյալները և քարտեզները, ՆԱՍԱ-ի արտագալակտիկական տվյալների շտեմարանի (NED) տեղեկատվությունը, Սլոանի երկնքի թվային շրջահայության (SDSS) ուղղակի պատկերները, սպեկտրները:

«Մարգարյանի գալակտիկաները» խիստ կարևոր դեր ունեն աստղագիտության և աստղաֆիզիկայի ամենատարբեր ոլորտներում, մասնավորապես արտագալակտիկական աստղագիտության, ակտիվ գալակտիկաների, գալակտիկաների էվոլյուցիայի, գալակտիկաներում աստղառաջացման գործընթացների, գալակտիկաների փոխազդեցությունների վերաբերյալ խնդիրներում: Դրանց մանրակրկիտ ուսումնասիրությամբ են զբաղված բազմաթիվ աստղագետներ:

Այս օբյեկտների վերաբերյալ տվյալների լիակատար շտեմարան չի եղել, ինչը դժվարացնում էր «Մարգարյանի գալակտիկաներ»-ի համապարփակ ուսումնասիրությունը: Այժմ մեր խմբի կողմից ստեղծված «Մարգարյանի գալակտիկաներ»-ի համասեռ, բազմալիքային, բոլոր հնարավոր տվյալները պարունակող շտեմարանն օգտակար կլինի վիճակագրական ուսումնասիրությունների համար: Այս աշխատանքը կնպաստի բազմաթիվ այլ գիտական աշխատանքների իրականացմանը», - ասաց ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արեգ Միքայելյանը:

Ըստ նրա՝ արդեն որոշ աստղագետներ հետաքրքրվել են կատարված աշխատանքով: Մասնավորապես ֆրանսիացի աստղագետ պրոֆեսոր Միշել Դենեֆելդի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ համատեղ ուսումնասիրություններ կատարելու «Մարգարյանի գալակտիկաներ»-ի ենթակարմիր ճառագայթման տիրույթում:

Շտեմարանը ստեղծող խմբի մեծամասնությունը երիտասարդներ են՝ Հայկ Աբրահամյան, Գուրգեն Պարոնյան, Գոռ Միքայելյան, Անդրանիկ Սուքիասյան, Լիանա Համբարձումյան և Վարդուհի Սկրտչյան:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**





## Գիտնականը և քաղաքական գործիչը

2023 թ. սեպտեմբերի 18-ին լրանում է նշանավոր գիտնական, հասարակական-քաղաքական անվանի գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանի ծննդյան 100-ամյակը:

Այդ առթիվ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ճանաչված արձակագիր-հրապարակախոս Ֆելիքս Բախչինյանի «Ֆադեյ Սարգսյան» մենագրությունը, որի հրատարակչությունը նախաձեռնել է Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտը Երևանի Մաթեմատիկական մեթեմատիկական գիտահետազոտական ինստիտուտի աջակցությամբ:

Ընթերցող լայն հանրությանը ներկայացրած գրքում հեղինակը համաձայնալից անդրադարձ է կատարել մեծ հայի և մեծ գիտնականի կենսագրությանը՝ ծննդավայրին ու արմատներին, անցած գիտական փառավոր ուղուն, ինչպես նաև հասարակական-քաղաքական գործունեությանը՝ որպես Հայաստանի վարչապետի:

Ինչպես Ֆ. Բախչինյանն է վկայում, բազմաթիվ առիթներ է ունեցել գրելու «...անվանի գիտնական, պետական, քաղաքական գործիչ և պարզապես հրաշալի մարդ Ֆադեյ Տաճատի Սարգսյանի մասին, նաև երջանիկ պատեհությունն է ունեցել թարգմանելու լիտվացի մեծ բանաստեղծ Եդուարդաս Մեժելայտիսի հոգվածը նրա մասին»: Հեղինակն այդ ամենը երախտագիտությամբ ու պատասխանատվության մեծ զգացումով է կատարել: Նույն զգացումն է ապրում նաև այսօր, սակայն զգացողություններին իջել է «...ափսոսանքի, տխրության մի անթափանց շղարշ, որի ծանրությունից հոգին ցավում է. այն ժամանակ մեզ հետ էր մեծ գիտնականը, մեր բոլորի ավագ ընկերն ու խորհրդատուն»:

Մենագրության մեջ Ֆադեյ Սարգսյանի կյանքի և հասարակական-քաղաքական գործունեության տարբեր էջեր ներկայացնելիս կարևոր մեջբերումներ ու անդրադարձներ են կատարվել նրա «Կյանքի դասերը» ինքնակենսագրական գրքից. այնտեղ «Ֆադեյ Տաճատովիչն է՝ իր հանճարեղ պարզությամբ ու խորունկ իմաստությամբ... արժանապատվությամբ, սիրով ու նվիրումով ապրած մի ամբողջ կյանք»:

Հեղինակը քայլ առ քայլ վեր է հանում Ֆ. Սարգսյանի կենսագրության կարևոր հանգրվանները՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտից մինչև Տոմսկի գիմնադրական էլեկտրատեխնիկական կապի ակադեմիա, հայրենական ռադիոլոկացիոն տեխնիկայի զարգացմանը նվիրված աշխատանքներ հրետանային գլխավոր վարչությունում, երկարամյա և բեղմնավոր գործունեություն Երևանի Մաթեմատիկական մեթեմատիկական գիտահետազոտական ինստիտուտում, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի բարձր պաշտոնում: Հեղինակն անդրադառնում է նաև նորանկախ Հայաստանի կյանքում Ֆ. Սարգսյանի ունեցած նույնքան անձնվեր աշխատանքին՝ որպես ՀՀ ԳԱԱ նախագահ և ՀՀ վարչապետի խորհրդական: Առավել հիշարժան է նրա արգասաբեր գործունեությունը Գիտությունների ազգային ակադեմիայում՝ սկզբում որպես բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 1993–2006թթ.՝ նախագահ:

Գիրքը նաև մարդկային մի շատ կարևոր տաղանդի՝ աշխատանքին ու աշխատասիրությանը նվիրումի մասին է: Ֆադեյ Սարգսյանն իր կյանքով ու գործով, «Կյանքի դասերով» հաստատում է այս անանց ճշմարտությունը. «Ես չեմ կարող աշխատել՝ ամբողջապես չնվիրվելով գործին»:

Հեղինակը փորձել է ծավալուն նյութը ընթերցողին մատուցել գրական տարբեր ժանրերի (հուշագրություն, հրապարակախոսություն, արձակ, գիտահանրամատչելի ակնարկ և այլն) փոխկապակցված համադրությամբ: Այս ձևաչափը հնարավորություն է ընձեռել նրան առավել պատկերավոր և մատչելի ներկայացնելու Ֆադեյ Սարգսյանի կյանքի և գործունեության ուշագրավ դրվագները, նրա ծանրակշիռ վաստակը մեր երկրի սոցիալ-տնտեսական, ինչպես նաև անցումային շրջանում գիտական ներուժի պահպանման և զարգացման գործում:

Գիրքն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Նրանում տեղ են գտել Ֆ. Սարգսյանի սերտ շփումների հետաքրքիր մանրամասներ, նրան տրված գնահատականներ, ինչպես նաև տարբեր իրադարձությունների և անձանց վերաբերյալ անվանի գործիչի հայտնած տեսակետներն ու կարծիքները:

Շնորհակալ գործ է կատարել Ֆելիքս Բախչինյանը, ով սիրով ստանձնել է այս գրքի պատրաստման և հրատարակման աշխատանքները: Նրա «Ֆադեյ Սարգսյան» արժեքավոր մենագրությունը լավ նվեր է մեծ գիտնականի 100-ամյա հորեկյան առթիվ, և խորհրդանշական է, որ այն լույս է տեսնում ՀՀ ԳԱԱ կազմավորման 80-ամյակի նախաշեմին:

**Հայարդիի ԽԱՇՍՏՐՅԱՆ**  
**Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն ինստիտուտի գործադիր տնօրեն**

## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ

ՀՀ ԳԱԱ 80-ամյա պատմության բոլոր ժամանակահատվածներում մշտապես կարևորվել է մեծ ուշադրության է արժանացել հրատարակչական գործունեությունը, որը եղել և մնում է Ակադեմիայի գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Այդ նպատակով ԳԱ-ն հիմնադրել է հրատարակչություն, գիտական հանդեսներ, ստեղծել է տպագրական բազա, որոնց միջոցով իրականացնում է իր հրատարակչական գործառնությունները:

Դեռևս 1936 թ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) նախագահությանը կից ստեղծվեց հրատարակչական բաժին: 1940 թ. Արմֆանի նախագահ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու նախաձեռնությամբ այդ բաժնի հիման վրա ձևավորվեց ինքնուրույն գործող առանձին կազմակերպություն՝ Արմֆանի հրատարակչությունը:

1943 թ. երբ կազմավորվեց Գիտությունների ակադեմիան, հրատարակչությունը ներառվեց նրա կազմ՝ որպես ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն: 1993 թ. այն վերանվանվեց ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, իսկ 2000 թ. վերակազմավորվեց ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտադրական ՊԺԲ ընկերության:



Արմֆանի առաջին գիտական ժողովածուները լույս են տեսել դեռևս 1938-39 թվականներին: Դրանցից էին Սատրաղիտարանի և Բուսաբանական այգու բյուլետենները, որոնք դարձան մեր գիտական պարբերականների նախակարապետը: Իսկ 1940 թ. լույս տեսած «Տեղեկագիր. հասարակական գիտությունների սերիա» և «Տեղեկագիր. բնական գիտությունների սերիա» պարբերականներով փաստորեն սկզբնավորվեց ակադեմիական լիարժեք գիտական հանդեսների հրատարակչության գործընթացը: Այն առավել աշխուժացավ և կանոնակարգվեց ՀԽՍՀ ԳԱ կազմավորումից հետո. 1944 թ. լույս տեսավ «ԳԱ Ձեկույցներ» հանդեսը, 1948 թ. ակադեմիական երկու «Տեղեկագրերը», ըստ գիտության համապատասխան բնագավառների, տրոհվեցին մի քանի հանդեսների, այնուհետև հիմնադրվեցին նորերը: Գիտական հանդեսների կայացման հիմնական փուլն ավարտվեց 1960-ական թվականներին:

1950-ական թվականներից սկսած՝ ակադեմիական հրատարակչությունը իր ծավալուն գործունեության և հեղինակային վարկանիշի շնորհիվ դարձել էր հանրապետության առաջատար հրատարակչություններից մեկը, իսկ գիտության տարբեր բնագավառներին վերաբերող հրատարակչությունների ծավալով այն այսօր էլ պահպանում է իր առաջատար դիրքերը: Համառոտ ներկայացնենք ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության գործունեության հիմնական ուղղությունները և արդյունքները:

### Գործունեության հիմնական ուղղությունները

ՕԳԱԱ համակարգի կազմակերպությունների գիտական աշխատությունների հրատարակչական, խմբագրական, սրբագրական, համակարգչային, գեղարվեստական-տեխնիկական ձևավորման և այլ աշխատանքներ:

ՕԳԱԱ գիտական 17 հանդեսների պատրաստման և հրատարակման աշխատանքներ, որոնք ներառում են՝ հանդեսների բովանդակային մասի ապահովում (գիտական հոդվածներով, հարդորումներով և այլ նյութերով հերթական համարների համալրում, հարկ եղած դեպքում դրանց պատվիրում), հավաքված տեքստերի խմբագրում, սրբագրում, գրախոսությունների կազմակերպում և հրատարակչական բնույթի այլ աշխատանքներ:

ՕՀրատարակչությունը լույս է ընծայում «ԳԱԱ Ձեկույցներ», «Աստղաֆիզիկա», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Մեխանիկա», «Հայաստանի բժշկագիտություն», «Հայաստանի կենսաբանական հանդես», «Հայաստանի քիմիական հանդես», «Տեղեկագիր. տեխնիկական գիտությունների սերիա» (ՀԴԵՀ-ի հետ համատեղ), «Գիտություններ երկրի մասին», «Նեյրոքիմիա» (ՌԴ ԳԱ-ի հետ համատեղ) ակադեմիական գիտական հանդեսները և «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը:

ՕԷլեկտրոնային երեք «Ֆիզիկայի հայկական հանդես», «Հայկական մաթեմատիկական հանդես» և «Բնական գիտություններ» հանդեսների պատրաստման և էլեկտրոնային եղանակով հրատարակման աշխատանքներ:

ՕԳԱԱ «Գիտություն» թերթի հրատարակչություն:

ՕԳրքերի և հանդեսների տպագրական ամբողջական գործընթացի իրականացում:

ՕԱյլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ պատվերային կարգով իրականացվող աշխատանքներ:

ՕՄասնակցություն գրքի միջազգային և համրապետական տոնավաճառներին, մրցույթներին, ցուցահանդեսներին և այլ միջոցառումներին:

ՕՀամագործակցված աշխատանքներ գրավաճառ կազմակերպությունների, գրադարանների, այլ հրատարակչությունների և տպարանների հետ:

### Գործունեության հիմնական արդյունքները

Օ«Գիտություն» հրատարակչությունը մինչ օրս լույս է ընծայել ավելի քան 6500 անուն գիրք և գիտական հանդես՝ շուրջ 100 հազար տպագրական մամուլ ծավալով և 5 մլն տպաքանակով: Ներկայումս տարեկան կտրվածքով հրատարակում է շուրջ 100 անուն 1200 տպագրական մամուլ ծավալով:

ՕԳիտական հանդեսներից մի քանիսն ունեն միջազգային լայն ճանաչում և թարգմանաբար վերահրատարակվում են արտասահմանում («Աստղաֆիզիկա», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Նեյրոքիմիա»):

ՕԳործունեության ողջ ընթացքում առաջնային է եղել հատկապես հայագիտական գրքերի և մատենաշարերի հրատարակչությունը: Մշտապես կարևորվել է հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, արվեստին, պատմամշակութային ժառանգությանը, Ղարաբաղյան շարժմանը, Հայաստանի անկախությանը, Հայոց ցեղասպանությանը, Սփյուռքին նվիրված աշխատությունների հրատարակչությունը:

ՕԳիտության ամենատարբեր ոլորտներին վերաբերող գրքերից և հանդեսներից բացի, հրատարակչությունը տպագրել է գեղարվեստական, քաղաքական, գիտահանրամատչելի, հրապարակախոսական և այլ բնույթի գրականություն:

ՍՄԵԾ տեղ է հատկացվել հայ դասականների երկերի ժողովածուների ակադեմիական հրատարակչությանը:

ՕԳիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (MAA) գրահրատարակչական խորհրդի կազմում հրատարակչությունը համագործակցել է ԱՊՀ երկրների ակադեմիական հրատարակչությունների հետ:

ՕՀՀ ԳԱԱ մակնիշով լույս տեսած տասնյակ գրքեր արժանացել են ՀԽՍՀ պետական, ՀՀ նախագահի մրցանակների, Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի և ՀՀ մշակույթի նախարարության դիպլոմների:



Անցած ութ տասնամյակների ընթացքում հրատարակչության գործունեությունը նպատակաուղղված է եղել ակադեմիական գիտության հանրայնացմանը, գիտական ուսումնասիրությունները բազմաթիվ գրքերի, մատենաշարերի և հազարավոր գիտական հոդվածների տեսքով ընթերցող հանրությանը ներկայացնելուն, ինչն օրյեկտիվորեն նպաստել է ակադեմիական գիտության զարգացմանը: Մեր բազմաթիվ անվանի գիտնականների համար ԳԱԱ գիտական հանդեսները ժամանակին դարձան նրանց գիտական մեկ-մարկի առաջին և լավագույն հարթակը: Այսօր էլ ակադեմիական հանդեսները նպաստում են գիտության մեջ մեր համակարգի (և ոչ միայն) երիտասարդ մասնագետների կայացմանը. նրանց գիտական առաջին ուսումնասիրությունները հրապարակվում են հենց այս հանդեսներում:

Ակադեմիական գրահրատարակչության գործընթացում կան նաև որոշ խնդիրներ, որոնց մասին այսօր բարձրաձայնելը, հասկանալի պատճառներով, անհիմաստ է ու ժամանակավրեպ, քանի դեռ առկա է ԳԱԱ հետագա գործունեությանը առնչվող անորոշությունը: Բայց կա կենսական կարևոր մի հարց, որի լուծումը չպետք է հետաձգել: ԳԱԱ գիտական հանդեսների աշխատակիցների՝ պետքույնեղ հաստատված աշխատավարձի ֆոնդը 13 տարի չի ավելացել: Ռազմական է մշել, որ աշխատակիցներից 60%-ը ստանում է նվազագույն աշխատավարձ, իսկ մյուսները՝ հանրապետությունում միջին աշխատավարձից ավելի քան կրկնակի պակաս: Մտավոր և տեխնիկական աշխատանք կատարողների աշխատավարձերը հավասարեցվել են: Նման համահարթեցման պայմաններում հնարավոր չէ արժևորել աշխատողի մասնագիտական հմտությունները, ծանրաբեռնվածությունը և տարբեր հաստիքներ զբաղեցնող անձանց համար տարբերակված աշխատավարձեր սահմանել:

Հաշվի առնելով, որ ԳԱԱ գիտական հանդեսները զգալի ներդրում ունեն ակադեմիական համակարգի գիտական ձեռքբերումների հանրայնացման գործում, ՀՀ ԳԱԱ նախագահությունը 2024թ. պետքույնեղի ձևավորման հայտում արդեն իսկ ներառել է գիտական հանդեսների խմբագրությունների աշխատակիցների աշխատավարձերի բարձրացման հարց: Հուսանք, որ ԳԱԱ նախագահությունը հետամուտ կլինի, որպեսզի նրանց աշխատավարձի ֆոնդի առնվազն 30%-ով ավելացնում ամրագրվի պետքույնեղի նախագծի վերջնական տեքստում:

ԳԱԱ գրահրատարակչության ոլորտում այսօր աշխատում են հրատարակչական գործի փորձառու մասնագետներ, որոնք անում են հնարավորինը՝ ակադեմիական մակնիշով լույս ընծայվող գիտական հրատարակչությունների վարկանիշը բարձր պահելու համար:

**«Գիտություն» թերթի խմբագրություն**

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

(Ապագայի մասին Գիտության  
ստեղծած 100-ամյա հիմունքները)

Լրացավ մշակվող գիտնական, բարձրագույն կրթության ոլորտի երախտավոր, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Վռաժ Կալանյանի Դոկլաթյանի ծննդյան 100-ամյակը:

Վ. Դոկլաթյանը ծնվել է 1923 թ. Նոր Բայազետ քաղաքում (ներկայիս՝ Գավառ): 1940 թ. նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետ: Հայրենական մեծ պատերազմը սկսվելուց հետո կամավորագրվում է և 1942 թ. զորակոչվում բանակ: 1946 թ.՝ ծառայությունն ավարտելուց հետո, Վ. Դոկլաթյանը շարունակում է ուսումը և 1949 թ. գերազանցությամբ ավարտում համալսարանը: Դիպլոմային աշխատանքի և հետագայում ասպիրանտուրայի ղեկավարը ՀԽՍՀ ԳԱ ղեկավարության լաբորատորիայի տնօրեն Արմենակ Լևոնի Մեջրյանն էր՝ Հայաստանում օրգանական քիմիայի գիտական դպրոցի հիմնադիրը:


Վ. Դոկլաթյանի գործունեության արգասաբեր շրջանը սկսվեց 1954 թ. վերջերից, երբ նա տեղափոխվեց Գյուլիստան տեսական ինստիտուտ՝ որպես ընդհանուր քիմիայի ամբիոնի ասիստենտ: Այստեղ Վռաժ Դոկլաթյանի շնորհիվ սկսվեցին Հայաստանում սինթետիկ օրգանական քիմիայի մոլորակային ուղղության պաշտպանության քիմիական միջոցների մշակման ուսումնասիրությունները: Նրա ջանքերով 1962 թ. հիմնադրվում է պեստիցիդների սինթեզի և փորձաքննության պրոբլեմային լաբորատորիան, որը հետագիտել ընդլայնվում է և իր 20-25 աշխատակիցներով հաջողությամբ մրցակցում հսկայածավալ բյուջե ունեցող մոլորակային ուղղության արևմտյան խոշորագույն ֆիրմաների հետ: Վռաժ Դոկլաթյանը լաբորատորիան ղեկավարել է մինչև իր կյանքի վերջը:

Լաբորատորիայում ստացված հերթիցիդները, հակասնկային մոլորակներ և բույսերի աճի խթանիչները՝ կրոտիլինը, մեթազինը, սուլֆազինը, տրիսուրոնը, սուրամը, ֆենագոնը, լավիմը և այլն, տասնյակ տոննաներով արտադրվեցին Երևանում, Ուֆայում և այլուր: Այս առումով Վ.Դոկլաթյանը մեծ ավանդ ունի ԽՍՀՄ-ում մոլախտների դեմ պայքարի քիմիական մեթոդի ծնավորման և զարգացման պատմության մեջ:

Հետազոտությունների մյուս ուղղությունը դաշտերում լայն օգտագործում ունեցող պատրաստուկների հիման վրա մոլորակային միջոցների ստացումն էր՝ նպատակ ունենալով վերացնելու ելանյութերի թերությունները:

Սակայն, իհարկե, Վ. Դոկլաթյանն առաջին հերթին քիմիկոս էր: Թիրախային մոլորակային միջոցությունների սինթեզը, դրանց ստացման մատչելի և էժան եղանակների հայտնաբերումը, ստացված պատրաստուկները կյանքի կոչելը Դոկլաթյանի համար որոշիչ չափանիշներ են եղել քիմիկոսի աշխատանքը գնահատելիս: Նա ծավալուն հետազոտություններ է իրականացրել օրգանական միացությունների կառուցվածքի, ռեակտիվության և կենսաբանական ակտիվության ուսումնասիրության ոլորտում: Դոկլաթյանի կողմից հայտնաբերվել է պետոքս-ցախաթթվի էսթերների քլորոմեթոքսիմեթիլացման ռեակցիան, ուսումնասիրվել է դիէսթերների սապոնացման ուղղությունը: Դրոֆեսոր Դոկլաթյանն իրավամբ համարվում է ցիանամին-սին-տրիազիների քիմիայի հիմնադիրը: Նա առաջարկել է դրանց սինթեզի մոլորակային մեթոդ, որը արտոնագրվել է մի շարք արտասահմանյան երկրներում (Գերմանիա, Շվեյցարիա, Ճապոնիա):

Նախքան միջֆազային կատալիզի հայեցակարգի հայտնվելը և հաստատվելը



լը քիմիայում, նա հրատարակեց մի շարք աշխատություններ էսթերների սինթեզի վերաբերյալ՝ օգտագործելով ամոնիումի չորրորդային աղերը որպես այդպիսի կատալիզատոր:

Վռաժ Դոկլաթյանը բացահայտեց ալկոքսի (թիո,ամինո)-սին-տրիազիների մի շատ յուրահատուկ վերախմբավորում, որոնք հանգեցնում են կոնդենսված հետերո-սին-տրիազիների առաջացման:

Ժամանակին նրան հաջողվել է լուծել քլորոպրենային կաուչուկի թափոնների 1,3-դիքլորբուտեն-2-ի հետագա արդյունավետ կիրառման խնդիրը, որն ապահովել է լայնորեն կիրառվող «կրոտիլին» հերթիցիդի ստացումը: Նրա պատրաստուկներից շատերը բարձր արդյունավետությամբ և էկոլոգիական մաքրությամբ գերազանցում էին նմանատիպ արտասահմանյան միջոցները:

Իր գործունեության վերջին տարիներին ակադեմիկոս Դոկլաթյանը հաջողությամբ իրականացրել է հետերիտուլ-ֆոնիլմիդանյութերի շարքի մոլորակային սինթեզ, որոնք ծայրահեղ ցածր չափաբաժիններով կարող են օգտագործվել հացահատիկային մշակաբույսերի մոլախտների դեմ պայքարում:

Դրոֆեսոր Դոկլաթյանը ճանաչված հեղինակություն էր նաև բարձրագույն կրթության համակարգում: Նրա դասախոսական գործունեությունը կապված էր

Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի հետ, որտեղ նա ավելի քան 30 տարի (1958-1989 թթ.) ղեկավարել է ընդհանուր քիմիայի ամբիոնը: Ամբիոնի դասախոսները, նրա ուսանողներն ու ասպիրանտները շատ էին հարգում ու սիրում իրենց ուսուցչին: Նա կարող էր լինել ցանկացած քիմիական համալսարանի հպարտությունը, բայց հավերժ հավատարիմ մնաց գյուղատնտեսությանը, որի զարգացմանը նվիրեց իր ողջ կյանքը: Հետերոցիկլիկ միացությունների քիմիան դարձավ նրա գիտական հետաքրքրությունների առանցքը:

Գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար վաստակաշատ գիտնականը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2), Պատվո մշան շքանշաններով, Ամանիա Շիրակացի և այլ մեդալներով:

Ակադեմիկոս Դոկլաթյանը մոտ 450 գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ 130 հեղինակային իրավունքի վկայագրերի: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են 4 դոկտորական և մոտ 50 թեկնածուական ատենախոսություններ:

Գիտական ծանրակշիռ ձեռքբերումների համար Վ. Դոկլաթյանը 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1994թ.՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: Նա ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի անդամ էր: Վ. Դոկլաթյանը բազմաթիվ գիտխորհուրդների, գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ էր, երկար տարիներ եղել է «ԳԱԱ Ձեկույցներ» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալը:

Վ. Դոկլաթյանը մեծ հմայքի տեր, հումորով լեցուն, սկզբունքային, հոգևոր մեծ հարստությամբ օժտված բազմակողմանի զարգացած անձնավորություն էր:

Ակադեմիկոս Վռաժ Դոկլաթյանը վախճանվել է 2005 թ.: Տարիների հեռվից ավելի հստակ է ընդգծվում անվանի գիտնականի ներդրումը Հայաստանում քիմիական գիտության զարգացման և երիտասարդ քիմիկոս կադրերի պատրաստման գործում:

**ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունք**

**Հայաստանի ազգային ազդարարին համալսարան**

## Փոխշատկապված երկու հորեկյաններ

Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 30-ամյակին և կենտրոնի հիմնադիր, դոկտոր, պրոֆեսոր, թրջանկահիշատակ Արմեն Սաղաթեյանի ծննդյան 70-ամյակին:

Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների, «Հիդրոտեխնոլոգիաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ կադաստրի կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի, բուհերի ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկայիցին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղաթեյանը կարևորեց Արմեն Սաղաթեյանի գիտահետազոտական գործունեությունը, նրա ներդրումը հետազոտությունների ապրանքայնացման և նորարարացման գործում: «Նա առաջատար գիտնական և գիտության հմուտ կազմակերպիչ էր: Ես տեսել եմ, թե ինչպես է Արմեն Սաղաթեյանն աշխատում էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի և յուրաքանչյուր աշխատակցի համար: Այդ աշխատանքային կոլեկտիվն ընտանիքի պես էր: Կենտրոնը գիտե՞իր Արմենով, Արմենին՝ կենտրոնով», - ասաց Աշոտ Սաղաթեյանը:

ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ



Սահակյանը նշեց, որ Հայաստանի համար դժվար ու մութ 90-ականներին Արմեն Սաղաթեյանը հիմնադրել է էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնը, որը 30 տարի անց ձեռք է բերել ազգային և միջազգային ճանաչում: «Կարևորում են շեշտել մեր կենտրոնի ստեղծման տարեթիվը, որպեսզի այսօրվա երիտասարդները հասկանան, որ եթե 1993 թվականին կարողացել եմք հաղթել, հիմա էլ պետք է ջանք գործադրենք, բյուրեղանանք, հավաքենք մեզ և զնանք առաջ», - ասաց նա:

Լիլիթ Սահակյանը շեշտեց, որ Արմեն Սաղաթեյանը Հայաստանում շրջակա միջավայրի գիտությունների դպրոցի ստեղծողն էր: Ի հիշատակ Արմեն Սաղաթեյանի՝ արդեն երրորդ տարին անցկացվում է շրջակա միջավայրի գիտությունների նվիրված երիտասարդական ամառային

դպրոց: Դպրոցի այս տարվա խորագիրն է՝ «Շրջակա միջավայրի գիտություններ. շրջակա միջավայր և սնունդ»:

«Արմեն Սաղաթեյանի հորեկյանն ու անունը որոշեցինք օգտագործել, որպեսզի մեկ անգամ ևս բարձրացնենք շրջակա միջավայրի և գիտության խնդիրների մասին: Դրանք կապել ենք նաև շրջակա միջավայրի բնագավառում կրթության, շրջակա միջավայրի մոնիթորինգի, որոշումների կայացման ու իրազեկման հետ», - ընդգծեց Լիլիթ Սահակյանը:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը նշեց, որ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնը դարձել է միջազգային մշակութային ունեցող գիտական օջախ: «Ունենալով մեծ գիտական փորձ՝ Արմեն Սաղա-

թեյանն իր ակտիվությամբ կարծես երկնաքար էր ակադեմիական միջավայրում: Նա կարողացավ գտնել էկոլոգիայի զարգացման ճիշտ ուղղությունը: Նրա կողմից Հայաստանում առաջին անգամ իրականացվել էր տեխնածին երկրաքիմիական հոսքի գնահատումը», - ասաց նա:

Միջոցառման ժամանակ ցուցադրվեց «Իմ սիրտը լեռներում է...» վավերագրական ֆիլմը՝ նվիրված պրոֆեսոր Սաղաթեյանին: «Այս ֆիլմը ոչ միայն հարգանքի տուրք է մեր ուսուցչին, այլև հայ մարդու կերպարին, ով կյանքի ընթացքում հավատարիմ է մնացել իր սկզբունքներին, բռնած ուղուն, ընտանիքին, աշակերտներին ու հայրենիքին», - ասաց Լիլիթ Սահակյանը:

Արմեն Սաղաթեյանի մասին հուշերով հանդես եկան նաև որդին՝ Արման Սաղաթեյանը և գործընկերները՝ Շուշանիկ Ասմարյանը, Դավիթ Պիպոյանն ու Օլգա Բելյանան:

Միջոցառման ընթացքում նաև տեղի ունեցավ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնի մոլորակային վերաբացումը:

Միջոցառման այնուհետև շարունակվեց ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնոֆերային հետազոտությունների կենտրոնում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

# ՆՅՈՒ ՅՈՐԲԸ ԶԱՐԽԱՆԱՀՐԱՀ ՀԵՏԱԲՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔ Է

Հինգերորդ ամսան ընդուն Նյու Յորքում՝ նախապես ծրագրելով, թե ինչ պետք է տեսնեն, որ չեն տեսել նախորդ այցելություններին:

Նախ՝ առաջին հերթին ուզում են մոտիկից տեսնել հայկական Սուրբ Վարդան եկեղեցին: Հենց քաղաք հասնելու երեկոյան ժամը 11-ին ուղևորվում են դեպի եկեղեցի, որը հյուրանոցից մեկ կիլոմետր հեռավորության վրա է: Բնականաբար եկեղեցին փակ էր, սակայն բաց էր մի դուռ, որից ներս են մտնում: Պատի վրա Մաշտոցի այբուբենն է, և սևամորթ հսկիչ տղամարդն ասում է, թե ներսում ժողով է ու չի կարելի ներս մտնել: Եկեղեցի գնում են կիրակի օրը՝ մասնակցելու խաղողօրհների արարողությանը:

Նյու Յորքի Սուրբ Վարդան եկեղեցին քաղաքի կենտրոնական մասում է և Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե տաճարի կրկնօրինակն է: Գեղեցիկ եկեղեցի է, խնամված, խորանում Աստվածամայրն է՝ մանուկ Հիսուսը գրկին: Գեղազիտական հաճույք են ստանում եկեղեցու ներքին հարդարումից: Բեմի վրա դրվագված մետաղյա մեծ կաթսա է՝ կանաչ և մուգ կարմիր խաղողի ողկույզներով: Արարողության վերջում այդ կաթսայի օրհնված խաղողը բաժանում են եկեղեցու գտնվող մարդկանց:



Շատ գեղեցիկ արարողություն է, երգում են բեմի վրա կանգնած 7 հոգևորականները, երգում է երգչախումբը: Սուրբ Վարդան եկեղեցում տիրում է հանգստացնող հոգևոր մթնոլորտ:

Շաբաթ օրվա ծրագիրը շատ մեծ է և պետք է հասցնել, որովհետև կիրակի երեկոյան վերադառնալու են Բոստոն: Նյու Յորքի՝ դարձյալ կենտրոնում գտնվող կաթոլիկ եկեղեցում, որը մեր Փրկչի անունն ունի, հոգևոր երգեհոնային համերգ է՝ կազմված Բախի ստեղծագործություններից: Հրաշալի համերգից առաջ երգեհոն նվագող երիտասարդը ջերմ խոսքով դիմում է ներկաներին:

Բախի երաժշտությունը, իհարկե, աստվածային է:

Իմ ծրագրի համակարգողն աղջիկս է, որը հաճախ է լինում Նյու Յորքում, թե՛ գործուղումներով և թե՛ համերգների ու թանգարանների մոտությունները դիտելու համար: Գնում ենք բանկային մագնատ Մորգանի գրադարան-թանգարան, որը հունա-հռոմեական ոճի մեծ շենք է: Նրա տարբեր մասերում կան նշանավոր նկարիչների աշխատանքների ցուցադրումներ: Դրանցից մեկը շվեյցարացի սիմվոլիստ նկարիչ Ֆերդինանդ Յոգլերի (1853-1918) նկարներն են: Նկարների թեմատիկան հիմնականում դիմանկարներ են, հաճախ խմբանկարներ, բնություն: Կան նաև մի շարք ինքնանկարներ: Խիստ ինքնատիպ նկարիչ է, բոլորովին յուրօրինակ ոճով, որում մարդու ներաշխարհը ներկայացնելու ձգտում կա:

Շատ հարուստ է Մորգանի գրադարանը: Ապշեցուցիչ քանակի Աստվածաշունչ գրքեր՝ ամենատարբեր տարիների հրատարակված, մեծաքանակ ֆրանսիական դասական գրականություն, Լաֆոնտենի՝ տարբեր տարիների հրատարակված առակների շքեղ հրատարակություններ, Վոլտերի երկեր և այլն: Առանձին ցուցադրված է մի մեծ Աստվածաշունչ՝ ոսկեկազմ, զարդարված թանկագին քարերով: Գրադարանի սրահներից մեկը նվիրված է հնագիտական իրերի ցուցադրմանը, որոնց գերակշիռ մասը հին եգիպտական ու պարսկական են:

Մորգանի գրադարան-թանգարանից հետո գնում ենք Նյու Յորքի հռչակավոր հանրային գրադարան, որին երկրորդ կյանք է պարգևել մեր հայրենակից Վարդան Գրիգորյանը (1934-2021): Իր այդ մեծագույն ու դժվարագույն առաքելության մասին Վարդան Գրիգորյանը պատմում է «Տուն տանող ճանապարհը. իմ կյանքի պատմությունը» հրաշալի ուսուցողական գրքում, որը «Newmag»-ը թարգմանել է հայերեն: Նյու Յորքի հանրային գրադարանն առանձին սրահում ցուցադրում է իր գանձերը:

Նյու Յորքի հանրային գրադարանը բաց է մարդկանց համար, և այն լիքն էր զբոսաշրջիկներով ու տեղացիներով, որոնք եկել էին ամենատարբեր տարիքի երեխաների հետ: Հաջորդ վայրը, որն այցելեցի, Նյու Յորքի Հայ լայն էր՝ օդում գտնվող զբոսայգին: Նյու Յորքի բազմաթիվ երկնաքերները տեղ չեն թողնում ծառերի համար: ԱՄՆ-ում շատ կան ծառաշատ քաղաքներ, հենց մեկը՝ Բոստոնը: Ծառերի պահպանությունից Նյու Յորքում օդը չի փայլում իր մաքրությամբ: Եվ ահա մի շարք խելացի մարդիկ մտաիդացել են 1846-ին կառուցված, քաղաքի տարբեր մասերն իրար միացնող օդային երկաթգծը դարձնել այգի, որովհետև այն այլևս չէր գործածվում: Նյու Յորքն ունի մեծ մետրո: Բնականաբար օդային կամրջի երկու կողմերում լցվել է հող, տնկվել են ծառեր՝ նրանց ներքևում տեղական պայմաններում աճող խոտեր ու ծաղիկներ: Դրանք տնկվել են 3 կիլոմետրի վրա, դրվել են բազմաթիվ գեղեցիկ փայտե նստարաններ, ու որոշ տեղերում մնացել են երկաթգծի ռելսերը: Հիմա այդ օդային այգին դարձել է զբոսաշրջիկների սիրելի վայրը:

Մենք այգին դիտելուց հետո պետք է շտապենք Բրոդվեյի թատրոն՝ շուրջ մայելու: Շուրջ կոչվում է «Back to the Future» («Վերադարձ դեպի ապագա»), այն նույնպես կինոնկարի երաժշտական ներկայացումն է: Ավելի մոտ ժամանակների մարդը հայտնվում է 1955 թվականում: Շուրջի կատարողները հիանալի երգում ու պարում էին, հատկապես շատ գեղեցիկ էին 1955-ի կանացի զգեստները: Կեղծամները բնական էին, և ուրախությունը բեմից հորդում էր դեպի դահլիճ:

Շաբաթ օրվա առաջին այցելության վայրը հենց ՄԱԿ-ի շենքն էր, և ես շատ էի ուզում նկարվել պետական դրոշմների շարքում գտնվող հայկականի հետ, սակայն պարզվեց, որ դրոշմները շաբաթ ու կիրակի օրերին ընդհանրապես չեն դրվում, մնացած օրերին էլ ոչ միշտ են դրվում: Մտաիդացումն ուներ իր պատճառը:

2020 թվականի օգոստոսի 11-ին անգլիական «English Club» ակիբով դիտում էի «Պատմության այս օրը» հաղորդումը: Եվ հիանալի անակնկալ: Ասվեց, որ պատմության այդ օրը՝ 2492 տարի Քրիստոսի ծննդից առաջ, ստեղծվեց հնագույն հայկական պետությունը, և նրա իմնադիր Հայկը հաղթեց Բեկին: Եկրանի վրա դրված էր ճակատամարտի այն դրվագը, երբ Հայկը իր նետով սպանում է Բեկին: Սակայն մի որոշ ժամանակ անց «Պատմության այս օրը» հանվեց ծրագրից: Այն գրված է ցանկում, սակայն փոխարենն ուրիշ հաղորդում է: Ես ուզում էի օգոստոսի մույն օրը նկարվել Հայկի պետության դրոշով: Ես ինձ ու բոլոր հայերին համարում եմ Հայկի շառավիղներ: Այդպես են մեզ ավանդել Մովսես Խորենացին, Գրիգոր Մազիստրոսը, Խաչատուր Աբովյանը, Հովհաննես Թումանյանը, Դանիել Վարունյանը, Եղիշե Չարենցը, շատերը, նաև ծնողներս, ուսուցիչներս, դասախոսներս:

Կիրակի օրը գնում ենք հայկական եկեղեցի, իսկ դրանից հետո՝ Բրուկլինի կամրջով քայլելու: Այս կամրջը տեսել եմ բազմաթիվ հոլիվուդյան ֆիլմերում: Այն կառուցվել է 19-րդ դարի կեսերին: Տարբեր տարիների վերանորոգվել է: Մոտ 6 կիլոմետր պետք է քայլենք կամրջի երկու կողմով՝ Նյու Յորքը դիտելու համար: Մարդաշատ կամրջի ողջ երկայնքով վաճառվում են զանազան մամր ապրանքներ, նաև ջուր և ուտելիքներ:

Վերադառնում ենք հյուրանոց, և մեքենան մեզ տանում է դեպի Բոստոն: Բոստոն-Նյու Յորք ճանապարհը գեղեցիկ է, որովհետև անցնում է անտառների միջով: Զգիտեմ՝ նորից կլինե՞մ Նյու Յորքում, թե՞ ոչ, սակայն գիտեմ, որ այդ զարմանահրաշ քաղաքում դեռ շատ բան կա տեսնելու:

Անելիտա ԴՈՆՈՒՄԱՆՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ

## ՀՈՒՇԵՐ ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԿՅՆՆՔԻՑ\*



### «ԽԱՄԻԱԹՍ ԳԵՇ Է...»

Պատմում էր Նաիրի Ջարյանը. «1939 թվականի ամռանը Ավետիք Իսահակյանի հետ հանգստանում էինք Սևանա կղզու գրողների տանը: Մեզ հետ էին նաև նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, մեծանուն դերասանուհի Արուս Ոսկանյանը, մեր գրողներից Քոչարը, Սիրաքը, Միշո Մանվելյանը:

Առավոտյան՝ նախաճաշից առաջ, հավաքվել, գրուցում էինք լիճ տանող աստիճանների գլխին, երբ նկատեցինք, որ հեռվից աստիճաններով բարձրանում է Արուս Ոսկանյանը՝ լայնեզր ճերմակ գլխարկով, որ փոխարինում էր հովանոցի, երկարուն ճերմակ խալաթը հագին: Երբ նա հավասարվեց մեզ, առանձին սիրով ողջունեց Ավետիքին:

- Է՛հ, լուգանքդ անուշ: Արևի վաննա լա՞վ ընդունեցիր, Արուս ջան:  
- Աղեկ, աղեկ, սեցել եմ, Վարպե՛տ ջան, կուզե՞ս՝ քեզ ցույց տամ:  
Եվ այս խոսքերի վրա Արուսը ձեռքի լայն շարժումով մի կողմ քաշեց խալաթի փեշը, ինչպես թատրոններում վարագույրն են բարձրացնում և արժանանում բուռն ծափերի:

- Գոցի՛ր, գոցի՛ր, Արուս ջան, թե չէ խափաթս գեշ է...»:

### «ԷՆ ՄԵՎ ՀՈՒՆԸ...»

«1951 թ. մայիսին,՝ պատմում էր ինձ Համո Սահյանը,՝ Գրողների միության մուտքի դիմաց հանդիպեցինք Ավետիք Իսահակյանին: Մենք ջերմ բարևեցինք Վարպետին, չորս հոգով էինք՝ ես, Սերո Խանգաղյանը, Վահագն Դավթյանը և երիտասարդ բանաստեղծ ու քննադատ Բագրատ Ուլուբաբյանը՝ Ղարաբաղից:

- Վարպե՛տ ջան, երիտասարդը Ստեփանակերտից է, շատ էր ցանկանում Ձեզ հետ ծանոթանալ:  
Վարպետը պինդ սեղմեց Բագրատի ձեռքը և հարցրեց.  
- Ասա՛, էն սև շուներ դեռ սա՞ղ է:  
Բագրատը զարմացած նայեց Վարպետին և կարկամած հարցրեց.  
- Վարպե՛տ ջան, Դուք ո՛ւմ նկատի ունեք:  
Վարպետն անվրդով, սակայն բավական բարձր ասաց.  
- Բաղիրով շունը, - և ձեռնափայտը վերև ուղղելով, ամեն բառը շեշտելով՝ ասաց.

- Այո՛, նա կատկի այն ժամանակ, երբ Մոսկվայում սատկի մեծ շունը:  
Մենք մեր տեղերում քարացած մնացինք: Ոչ ոք ձայն չէր հանում: Երեկոյան ուշ սկսեցինք իրար զանգ տալ, ուրեմն դու տանմ ես, լավ է, ուրեմն հանգիստ ենք: Դե, ճիշտն ասած, մեր խմբում չկար մեկը, որ ստորության ընդունակ լիներ»:

## ԵՐԿՈՒ ՃԱՄՊՐՈՒԿ



Գրիգոր Արտեմի Հարությունյանը, 16 տարի Հայաստանը դեկավարելուց հետո, երբ ազատվեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից, երեք օր անց լքեց բոլոր երևանցիներին հայտնի «Հարությունյանի տունը», որը գտնվում էր Մաշտոցի (այն տարիներին՝ Ստալինի) պողոտայի վերևի մասում՝ Մատենադարանից մի քիչ ներքև: Այստեղ նա տիկնոջ՝ Աշխենի և դստեր՝ Նամիի հետ անց էր կացրել իր կյանքի վերջին 16 տարիները՝ 1937-1953 թթ.:

Գրիգոր Արտեմիչին անգամ մեքենայով չուղեկցեցին: Նրան հատկապես էր երկսեյականոց բնակարան Մաշտոցի պողոտայում՝ կից «Նաիրիից» մի քիչ վերև: Ասենք ուղեկցողի կարիք էլ չկար: Գրիգոր Արտեմիչի ձեռքին ընդամենը երկու ծամպուկ էր: Ահա 16 տարի Հայաստանը դեկավարած մարդու ողջ ունեցվածքը...

## ԱՃԵՄՅԱՆԻ ՏԱԳՆԱԴՐ

Ֆրունզիկ Սկրտչյանը մոր էր ընդունվել Սունդուկյանի անվան թատրոն: Շուտով ողջ խումբը մեկնում է Թբիլիսի հյուրախաղերի: Ժամանման օրը վրացի գործընկերները ճոխ սեղան են զգում: Եվ ինչպես ասում են՝ «...գինին հորդում էր գետի պես»:

Վարդան Աճեմյանը նկատում է, որ Ֆրունզիկը չափից ավելի է ըմպում վրացական գինին, այն էլ վրացական նշանավոր պոզ-գավաթներից և քիչ անց հանդիմանալից դիմում է Ֆրունզիկին.

- Ֆրունզիկ, հերի՛ք է խմես, երեկոյան ներկայացում կա:

- Բայց իմ դերը, Վարդան՝ Նիկիտիչ, ամխոսք է, միմանս է:

- Հենց վախենում եմ, որ խոսես:

\* Խմբ. կողմից - Որոշ կրճատումներով արտատպվում է գրականագետ Ավիկ Իսահակյանի «Երևանը երազում և արթմին: Տաս տարի անց» գրքից:

## ՆԺԴԵՀՅԱՆ ԴԱՄԵՐ

Օ Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկա ավելի բարձր և նվիրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր հավիտենական սեփականության վերստացումը:

Օ Ամեն մի «ես» հանցավոր ապստամբ է, ամեն մի «եսականություն» բարոյական մահափորձ է այն Մեծ Ամբողջի դեմ, որ ազգ է կոչվում:


Օ Բավական չէ հիացական վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ դեպի անցյալ սերունդը, պետք է գերազանցել նրան: Հենց սա է հարգանքի այն պատկեր, որ յուրաքանչյուր հետմորդ պարտավոր է դնել նախնյաց հիշատակների կրթողին:

Օ Միշտ էլ պարտվել են այն ազգերը, որոնք ունեցել են մեկ հենարան՝ քանակը: Կռվադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան են պատկանում վաղվա հաղթանակները:

Օ Ազգերը չեն ունեցել և պիտի չունենան ավելի մեծ թշնամի, քան նյութապաշտ առաջնորդը:

Օ Անբարոյական է իրեն երջանիկ զգացող անհայրենիքը, լինի դա անհատ, թե ժողովուրդ:

Օ Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:



## ԲԵՆՋԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

XVIII դարի ԱՄՆ քաղաքական գործիչ, դիվանագետ, գիտնական Բենջամին Ֆրանկլինին դեմքով ծանաչում է աշխարհի բնակչության մեծամասնությունը: Նրա պատկերը զետեղված է ԱՄՆ 100 - դոլարանոց թղթադրամի վրա: Սակայն քչերն են ծանոթ նրա գիտական վաստակին: Ամերիկացիները, խախտելով ավանդակարգը (բոլոր թղթադրամներին պատկերված են ԱՄՆ նախագահները), ամենաթանկարժեք թղթադրամին պատկերել են գիտնական-գյուտարարի դիմանկարը:

Բենջամին Ֆրանկլինն իր ժամանակի մեծագույն մտածողներից էր: Ընթերցողին ենք ներկայացնում շուրջ 250 տարի առաջ նրա արտահայտած մտքերից, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը:

ՕԱյն, ինչ սկսվում է ատելությամբ, ավարտվում է ափսոսանքով:

Օ Խելագարության երեք աստիճան կա՝ հավատալ, որ դու համար ես, բարձրաձայնել դա և հրաժարվել խորհուրդներից:

Օ Այն մարդկանց, ովքեր երբեք խորհուրդներ չեն լսում, անհնար է օգնել:

Օ Եթե ցանկանում եք իմանալ աղջկա թերությունները, նրա ընկերուհիների մոտ սկսեք զովաբանել նրան:

Օ Եղբայրդ կարող է քեզ լավ ընկեր չլինել, բայց լավ ընկերը միշտ էլ եղբոր պես է:

Օ Եթե անում ես այն, ինչ պետք չէ, ուրեմն հանդուրժիր այն, ինչ չես ուզում հանդուրժել:

Օ Դեմոկրատիան այն է, երբ գայլն ու ոչխարները

համաձայնեցնում են իրենց ճաշացանկը: Ազատությունն այն է, երբ լավ զինված ոչխարները կասկածի տակ են դնում գայլերի որոշումը:

Օ Սովորեցրո՛ւ քո երեխաներին լռել, որովհետև խոսել նրանք այսպես թե այնպես սովորելու են:

Օ Եթե դու ուզում ես համգիստ քնել, ապա հետդ անկողին տար քո մաքուր խիղճը:

Օ Մարդն ունի 3 հավատարիմ ընկեր՝ հին կինը, հին շունն ու աշխատած փողերը:

Օ Ավելի լավ է գեղեցիկ գործ անել, քան գեղեցիկ խոսել:

Օ Ընկերներ ընտրելիս մի՛ շտապեք, բայց նրանց փոխելիս առավել ևս շտապ որոշումներ մի՛ կայացրեք:



## ԿԱՐԱՆՏԻՆԻՑ ՄԱՐԴԻԿ ԲԹԱՆՈՒՄ ԵՆ\*

Այս թեզն ապացուցել են շուտանդացի հոգեբանները, որոնք ուսումնասիրել են համաճարակի պատճառով 13 շաբաթվա մեկուսացման ենթարկված 18-ից մինչև 72 տարեկան 342 կամավորների: Մասնակիցների մի մասին թույլ են տվել դուրս գալ կարճատև զբոսանքի և անգամ գնալ մոտակա խանութ, բայց ոմանք, հատկապես տարեցները և քրոնիկ հիվանդները, տնից դուրս չեն եկել: Բոլորը համացանցում անցել են ուշադրության, հիշողության, ուսանելիության, ժամանակահատվածը գնահատելու և որոշումներ ընդունելու կարողության թեստեր: Կարանտինի շրջանում այս գործառնությունները զգալիորեն թուլացել են, բայց կարանտինը համելուց հետո բավական արագ վերականգնվել են հատկապես երիտասարդների շրջանում: Ավելի վաղ նման երևույթներ նկատվել են տիեզերագնացների, անտարկտիկական կայանների աշխատակիցների, մեկուսի բանտարկյալների շրջանում:

## ՄՆՈՒՆԴ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Միջիգանի համալսարանի (ԱՄՆ) բնապահպանները և բժիշկներն ուսումնասիրել են ամերիկացիների սովորական սննդակարգը կյանքի տևողության վրա դրա ազդեցության տեսակետից՝ ուսումնասիրության մեջ ներգրավելով 5853 ուտեստ, մթերք և ըմպելիք: Թեև ակնհայտ է, որ հազիվ թե գտնվեն մեծ թվով խենթեր, որոնք ամբողջ կյանքի ընթացքում կառչած են սննդի մույն տեսակին, վիճակագրության եղանակները հնարավորություն են տվել հեղինակներին ամերիկացիների սննդի, հիվանդությունների, կյանքի տևողության վերաբերյալ տվյալների բազաների հիման վրա որոշակի թվերով գնահատելու, թե կյանքի քանի օր է խլում կամ ավելացնում սխալ կամ առողջ սննդակարգը: Ամենավտանգավոր կերակրատեսակի մեկ բաժինն ուտողից խլում է նրա կյանքի գրեթե 74 րոպե, իսկ որևէ օգտակար ճաշատեսակի մեկ չափաբաժնից նրա կյանքը երկարում է 80 րոպեով:

Ամենավտանգավորներից է, օրինակ, հոթ դոգը, հացի մեջ դրված մրբերշիկը, որն արժե կյանքի 36 րոպե, կոլայի կամ պեպսիի 1 բաժակը, 13 րոպե: Ամենավտանգավոր սննդամթերքը երշիկեղենն է, գրեթե բոլոր տեսակների մսերը, ծովախեցգետինը, ինչպես նաև ջերմոցային միրգն ու բանջարեղենը: Փոխարենը խմորով կարկանդակը կյանքն ավելացնում է 1 րոպե 18 վայրկյան: Ավելի օգտակար են գետնանուշը և ցանկացած տեսակի ընկույզը, ինչպես նաև ծովային ջրիմուռները:

Գիշտ է, կան նաև նման եզրահանգումները քննադատողներ: Երբ հետազոտության արդյունքները հրապարակվեցին «Թվիթերում», օգտատերերից մեկը գրեց, որ դատելով կերած հոթ դոգերի քանակից՝ ինքը պետք է մահանար 56 տարի առաջ:



\*«Գիտության աշխարհում», 2023 թ., № 2

## ՇԻՆ ԱՇԽԱՐԸԻ ՄԵԾԵՐԻ ԵՐԲԵՎԷ ԶԵՆԱՑՈՂ ՄՏՔԵՐԻՑ

Ամեն մի խոսք առանց գործի աննշան է ու դատարկ:

ԴԵՄՈՍԹԵՆԵՍ

\*\*\*

Խոսքի ուժը քիչ բառերով շատ բան արտահայտել կարողանալն է:

ՊԼՈՒՏԱՐԵՍՍ

\*\*\*

Մենք պետք է ձգտենք ոչ թե այն բանին, որ մեզ ամեն ոք հասկանա, այլ այն բանին, որ չլինի մեզ չհասկանալ:

\*\*\*

Շատերը, որ կատարում են ամենախայտառակ ա-րարքները, գեղեցիկ ճառեր են արտասանում:

ԴԵՄՈԿՐԻՏ

\*\*\*

Ստախոսին մենք չենք հավատում մույնիսկ այն ժա-մանակ, երբ նա ճշմարտությունն է ասում:

Այն տունը, որտեղ գրքեր չկան, նման է հոգուց զրկված մարմնի:

Ծոողների նկատմամբ սերը բոլոր առաքինություններին հիմքն է:

ՑԻՑԵՐՈՆ



\*\*\*

Ավելի շատ օգուվիր ականջներից, քան լեզվից:

ՄԵՆԵԿԱ

\*\*\*

Ազատությունն այն ամենն անելու իրավունքն է, ինչը չի վնասում ուրիշ-ներին:

ԿԼԱՎԴԻՈՍ

\*\*\*

Խելացի է ոչ թե նա, ով շատ բան գիտի, այլ նա, ում գիտելիքներն օգտակար են:

ԼՍՔԻՆԵՍ

\*\*\*


Առողջ բարբերն ավելի մեծ նշանակություն ունեն, քան լավ օրենքները:

ՏԱԿԻՏՈՍ

\*\*\*

Երբ ծաղրածուն ապրելու համար տեղափոխվում է պալատ, նա չի դառնում թագավոր, պալատն է վե-րածվում կրկեսի:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԱՑՎԱԾԸ



«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» հայտարարում է «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթ»:

Մրցույթի նպատակն է նպաստել երիտասարդ գիտնականների կողմից հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում մրցումնակ ու նորարարական հետազոտությունների կատարմանը, խթանել որակյալ անգլիալեզու հոդվածների պատրաստումն ու հրատարակումը:

Դրամաշնորհներ են տրվելու երկու-երեք երիտասարդ գիտնականներից բաղկացած խմբերին: Երկու հոգուց բաղկացած խմբերի ֆինանսավորման առավելագույն չափը 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ է, իսկ երեք հոգուց բաղկացած խմբերինը՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի սեպտեմբերի 25-ը:

Հայտատուն պետք է հանդիսանա խմբի ղեկավարը, ով կարող է լինել առկա/հեռակա ուսուցման ասպիրանտ, հայցորդ կամ առնվազն կրտսեր գիտաշխատող, գիտահետազոտական աշխատանք կատարող երիտասարդ գիտնական, որն ունի մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում կամ գիտական աստիճան և ներկայացնում է նվազագույնը երկու գիտական հոդված՝ հրատարակված ԲՈԿ-ի ցանկ ընդգրկված ամսագրերից մեկում վերջին երկու տարվա ընթացքում:

Խմբի բոլոր անդամները պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ կամ առնվազն մեկ տարի ՀՀ-ում կամ Արցախում մշտապես բնակվող և գիտահետազոտական աշխատանք կատարող երիտասարդ գիտնականներ, ում 36 տարին չպետք է լրացած լինի հայտերի ընդունման վերջնաժամկետի օրը: Երեխա(ներ) ունեցող երիտասարդ կին գիտնականների պարագայում մինչև 36 տարեկանի տարիքային շեմը ենթակա է վերանայման՝ յուրաքանչյուր երեխայի համար ավելացնելով լրացուցիչ մեկ տարի, իսկ ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած տղամարդկանց համար՝ մինչև 38 տարեկան:

Խումբը կարող է ունենալ արտասահմանյան խորհրդատու՝ օտարերկրյա գիտահետազոտական կազմակերպությունում աշխատող և գիտական աստիճան ունեցող գիտնական, և նրա Հիրշի ինդեքսը (h-index), ըստ «Scopus» շտեմարանի տվյալների, պետք է լինի առնվազն 3:

Հետազոտությունը պետք է իրականացնել 12 ամսվա ընթացքում: Հետազոտության ավարտին խումբը պետք է ունենա միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHC)»), կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)» <https://www.scimagojr.com/journalrank.php> պորտալում առնվազն Q4 քառորդում) ընդգրկված ամսագրերից մեկն ուղարկված (submitted) անգլիալեզու գիտական հոդված, որն առնվազն պետք է ընդունված լինի խմբագրի կողմից և ներկայացված առաջին գրախոսականին (review): Մրցույթի մանրամասներին կարող եք ծանոթանալ ՀՀ ԳԱԱ կայքում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱՎՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4,  
հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 20.09.2023 թ.:

"ГИТЯТИОН" ("Hayka") gazeta HAH PA